

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Հեազհետէ երեւան կւզան նոր հրատարակութիւններ որոնք օսմանեան կայսրութեան արդի կացութիւնը քննելով Արեւելեան խնդրին ապագան գուշակելու կը նկատին: Չանագան լեզուներով ստուար հատորներ, մեծ հանդէսներու մէջ խորագոյնին տեսութիւններ «Հիւանդ Մարդուն» ախտագնութիւնը կ'ընեն:

Կէս դարէ ի վեր է ամէն օր այդ Հիւանդին մահուանը կ'օպատուի, բայց անկա իր կեանքը քաշկոտելու կը յամառի: Եւ ընդունինք նաև որ Թիւրքերը ինքզինքնին ո՛չ Հիւանդ ո՛չ ալ մահամերձ կ'զգան: Կեանքի ինչ ինչ վիճակներու մէջ, ազիտութիւնը թերեւս երջանկութեան միակ պայմանը համարուի: Թիւրքերը ինքզինքնին այնքան զօրեղ և քաջառողջ կ'զգան որքան ուղիւթան Սիւլէյմանի մը, սուլթան Մուրատի մը օրերուն: Ու մինչ ճակատագրին ապատանամ, հանգիստ սրտով կ'ապրին իրենք, բարեխօսութեամբ իրենց ազիտութեանը, անդին եւրոպացիները աչքերնին չորս բացած միշտ մահճին շուրջը կը դեգերին: Կը քննեն, կը զննեն, կը տեղեկանան, եւ ժառանգութեան բաժանումին ծրագիրները կը պատրաստեն:

Թիւրքիոյ չորս կողմը շրջող վերջին նորագոյն հրատարակութիւնները ստացանք: Անոնց հեղինակները հետուէն, եւրոպական մայրաքաղաքներէ պարզ գիտակով մը չէ որ կը նային Թիւրքիոյ բազմազան տեսարաններուն վրայ եւ կը նկարագրեն զանոնք: Պատմական եւ քաղաքական գիտութեանց քաջ հմտացած անձնաւորութիւններ կ'այցելեն Փոքր-Ասիան, խորթափանց աչքերով կը քննեն հիմնական կացութիւնը, ու Եւրոպայի առջեւ կը պարզեն ինչ որ իրենք կը տեսնեն:

Այդ բոլոր հրատարակութիւնները շատ կարևոր տեղ մը կը նուիրեն մեզի: Ուշադրաւ նկատողութիւն մը: Օսմանեան կայսրութեան մէջ մեր ունեցած թիւին, ու մեզի ընծայուած քաղաքական կարևորութեան միջեւ համեմատութիւն ընել կարելի չէ: Ճշմարտութիւնը որմէն յածկննք, եւ ինչ՞ու: Ուրեմն կը տեսնենք թէ Փոքր-Ասիոյ

ընդհանուր ժողովուրդներուն մէջ, մենք հայերս հարիւրին 15 ենք միայն, իսկ միւս ժողովուրդները՝ հարիւրին 85: Եւ օսկայն ներքի է ընդունիլ թէ քաղաքական ընդհանուր մտահոգութեան մէջ մեզի բնծայուած կարևորութիւնը հարիւրին 85 է, իսկ միւս ժողովուրդներուն՝ հարիւրին 15 միայն եղած է զէթ մինչեւ վերջերս:

Շատ են այն պատճառները որոնք մեզի սրտապնդող, մեզի ապագային վրայ անընկճելի հաւատք ներշնչող այս տարօրինակ ու անհաւատալի վիճակը օտեղծեր են: Պէտք չենք տեսնել այդ պատճառները մէկիկ մէկիկ հոս պարզել: Ահա չորս տարի է որ Նոր Կեանքը առանց բռնակէ մը դանդաղելու կը գործադրէ իր ծրագրին էական մասը: Թէ՛ մեր վրայ, թէ՛ օսմանեան կայսրութեան վրայ Եւրոպայի գաղտփարները կը ներկայացնենք հայ ժողովրդին: Այդ գաղտփարները կրնան մեզի նպաստուոր ըլլալ թէ աննպաստ, քաղաքական տեսութիւնները կրնան իրարու հակառակիլ, սուլթանին անձին նկատմամբ գնահատութիւնները կրնան իրարմէ տարբերիլ, մենք ինչ որ լրջօրէն գրուած կը տեսնենք, զայն մեր ժողովրդին կը ներկայացնենք առանց վարանումի: Մեր ձախտողութեանց, որոնք առժամայ են, զլիաւոր պատճառը մեր քաղաքական դաստիարակութեան տպարութիւնն է: Չօրաւոր դաստիարակութիւն չի կայ առանց դրական գիտութեան: Ու գիտութիւնը երբեք դրական չէ եթէ ինքնախաբէութեան ձգտումէն կ'առաջնորդուի: Մաս մը հայեր յոռետես ինքնախաբէութեամբ, մաս մըն ալ լաւատես ինքնախաբէութեամբ կը հետամտին, գիտակցօրէն կամ անգիտակցօրէն, հայ ժողովրդին քաղաքական դաստիարակութիւնը միշտ իր նախնական վիճակին մէջ պահելու: Ո՛չ լաւատես, ո՛չ յոռետես, այլ՝ իրականատես ըլլանք:

Նորագոյն հրատարակութիւններէն մէկն է Պ. Լիւտովիգ տը Գոնդանտոնի «Քրիստոնեականեր և Միսիոնարներ» հատորը, որուն վրայ Պ. Ժիւլ Լըմէրի գրած յօդուածը մեր նախորդ թուով հրատարակեցինք: Հեղինակը անձամբ այցելած է Սուրիա եւ Անատոլիոս, մանրակրկիտ քննութիւններ կատարած է, եւ իր հետազօտութիւնները բազմապէս ուրիշ հեղինակներու նախորդ հրատարակութեանց հետ, հրապարակ հանած է գիրք մը որուն անկողմնակալ եզրակացութիւնները պէտք է մեզի օրտապըն-

դեն, և անդու անդադար աշխատութեան ու գործունէութեան մղեն:

9. աբ Գոնթաթանտոն կը յայտարարէ թէ հայկական խնդիրը օսմանեան կայսրութեան ծոցին մէջ այրող քաղցկեղ մըն է, որ առաջին զիպուածին պիտի վերայրի: Մ՛վ կը հատար, կ'ըսէ, որ սուլթան Համիտի հաստատած վարչական դրութիւնը յաւիտենական տեսչութիւն պիտի օւնենայ: «Լըջաբար խօսելով, իրաւարդեօք, կը հարցնէ, թիւրք եւ հելլէն պատերազմին յաղթանակները հրաշիւք իմն բուծեցին «Հիւանդ Մարգուն» քաղցկեղեալ վերքերը, ու երկայնակեցութեան ապահովագիր մը շնորհեցին»: Հայոց ապագային վրայ լիայօր է, եւ համոզուած է թէ մենք հայերս մեր ձեռքովը պիտի պատրաստենք այդ ապագան: «Ինչ, կը գօշէ, ժողովրդի մը մէկ տասներորդին կամ մէկ տասնըհինգերորդին կոտորուած կը բաւէ՝ որպէս զի անիկա անբեւութանայ: Այնքան տառապանքներէ խօսնէ և պարտաօտալ, Աօրիական Արեւելքի բրիտանականները պիտի լքանեն այն դատը զոր իրենց եւրոպական Արեւելքի եղբայրները բիրտուոր դժուարութիւններով շահեցան: Հայերը որ գործի մարդիկ են, ամէնէն տեւի աղէկ իրենց գիտեն թէ յաճախ կարելի է վերջի վերջոյ յաջողութիւն ձեռք բերել շնորհիւ օտակի և համբերութեան: Բայց ինչպէս Յոյները կրեաւի առթիւ, հայերն ալ գուցէ շատ աճապարեցին, ինչ որ իրենց խնդիրն լուծուած իրենց ենթադրածէն աւելի ժամանակի մը համար յետաձգեց:»

Հեղինակը կը կարծէ թէ Հայ ժողովուրդը հիմակ թէեւ կոտորածներէն ահաբեկ, հալածանքի ենթարկուած, ուստի եւ յատենի մը համար անգորութեան դատապարտուած, բայց առաջուրէն աւելի ահեղօրէն պիտի արթննայ շնորհիւ իր յորդառատ աճումի կօրովին: Պ. աբ Գոնթաթանտոն եւս այն համոզումը ունի թէ, ինչ որ ալ ըլլայ, բայց եւ այնպէս Եւրոպական քաղաքը որ մը նորէն պիտի պարտաւորուի զբաղիլ հայկական խնդրով, ազգեցութեամբ ներքին եւ արտաքին պատահարներու որոնք կրնան միշտ տեղի ունենալ, երբ ոսմանեան կայսրութեան վրայ կը խօսուի:

«Քաղաքական անձնաւորութիւնները որոնք իրաւ է թէ շատ անգամ օրը օրին կ'ապրին, կ'ըսէ, գիտեն օակայն թէ յեղափոխական շարժումները չեն ջնջուիր և անհետանար, այլ կը կերպարանափոխուին: Ենթադրելով իսկ թէ ազգայնութեան գաղափարին նպատատուր շարժումը սկսող դարուս մէջ տկարանայ, բիրտ ուժին ճնշման ներքեւ, բայց և այնպէս աժգօհները իրենց գոյութիւնը ուրիշ միջոցներով պիտի կրնան յիշեցնել:»

Պ. աբ Գոնթաթանտոն կը կարծէ թէ «հայ յեղափոխական քովիները միջազգային դժգօհներու համախմբումին պիտի մասնակցին երբ իրենց պահանջումները Եւրօպայէն անլուծելի մնան: Ընկերվարական ու անիշխանա-

կան գաղափարները իրենց նպատատուր կուսան մը կը գաննեն այն բաւար ճնշեալ ժողովուրդներուն մէջ որոնք այլ ևս չեն հատար իրենց ազգայնութեան յաղթանակին, և այսպէս եղած են բաւար ճնշեալ ժողովուրդները, ինչպէս՝ Բուլնիացիները, Իրլանտացիները, Ալգաացիները: Յուսահատութիւնը կը մղէ այդ ժողովուրդները ազգային անկախութեան տեղը դատակորգային կոնիւնները դնել:»

Մենք այս վերջին տեսութեան համաձայն չենք: Տակաւին յուսահատութեան չենք մղուած մեր արդար դատին յաղթանակին համար, հետևարար և դատակորգային կոնիւններու չենք պարտաւորուիր: Մեր հայրենիքը Արեւելեան Խնդրին մէջ մեծ դեր մը ունի կատարելիք: Վանդոսպէն մինչեւ Ալեկսանդրէթի Մօցը աշխարհագրական դիրք մըն է որ գերակշիռ կարևորութիւն ունի մեծ պետութեանց դիմաժարտ շահերու մըրցումին մէջ: Տարրական ճշմարտութիւններ են ասոնք, զոր յիշելու պէտքն իսկ զգալի չէ: Բայց Արեւելեան Խնդրին մէջ յանկարծականներն ալ անսպասելի չեն, ու երբ մէկէն ի մէկ կ'իրականանան անոնք, ալ բնական երևոյթներ կը համարուին:

Դեռ երէկը չմտնանք: Օսմանեան բանակը դէպի Աթէնք կ'արշաւէր, և ահա կրեաւն ազատուեցաւ: Տարաբաղղ կղզին կը մարտիրոսանար դարէ մը ի վեր: Պարտաւած Թիւրքիայէ մը նահանգի մը ազատագրութեան կորուստը հեշտին յաջողութեանց գասէն է դիւանագիտութեան համար, բայց յաղթական թիւրքիան նահանջի պարտաւորել եւ իր էն զեղեցիկ կղզին խել ձեռքէն, առասպելական գրոյց մը պիտի թուէր եթէ ականաեանները չըլլայինք այդ հրաշագործութեան: Միթէ միկնոյն վիլհելմ կայսրը 1897ին ալ սուլթանին ջերմ բարեկամը չէր: Միթէ 1897ին միկնոյն դրամատէրները իրենց շահերը իբր վահան թիւրքիոյ դէմ չէին բաներ: Քաղաքականութեան ուժգին փոթորիկ մը քնց տարաւ վիլհելմ ալ, դրամատէրներն ալ, սուլթանին բոլոր բարեկամներն ալ, վարձկան օրագրութիւնն ալ. ցիրուցան տարտղնեցան ամէնքն ալ:

Երթանք քիչ մը ետք, մինչեւ Նաւարէնի օրերը, երբ համախմբեալ Եւրոպան կը զօրացնէր թիւրքին ձեռքը ընդդէմ ապստամբ Յունաստանի, ճիշտ ու ճիշտ ինչպէս այսօր ընդդէմ Հայաստանի և Մակեդոնիոյ: Ու այն ըրակին երբ Իպրահիմ փաշա իր կրունկին տակ վերջնապէս կեալուրը ձգմելու վրայ էր, այդ կեալուրը գերեզմանէն իբր յարեալ ազատ հոչակուեցաւ: Ուր էր առջի օրուան Եւրօպան, որ այդ օրուան Եւրօպան: Ինչ ընելու եկած էին այդ նաւատորմները, և ինչ ըրին: Մ՛վ է քաղաքականութեան «երկկամանց քննող գաղանեաց»ը: Լիբանան երկու երեք տարի սպասեց որ Անգլիա իր հակաբրիտանական քաղաքականութեան մէջ յաղթուի Ֆրանսայէն: Պակարիոյ ազատումը գէ՛մ

Անգլիա ամբարտակ կանգնեցաւ: Պէտք է որ Մակեդոնիա յուստահատի, որովհետեւ Եւրոպա սուլթանին « ձեռքդ դաւար » կը պտոայ:

Ամէն պարագայի մէջ, արեւելեան խնդիրը սպառնական կը մնայ, եւ Պ. տը Գոնթանսոն կը կարծէ թէ ոչ ոքին սպասած պահուն նորանոր կնճռոտութիւններ կրնան ծագիլ, եւ այս անգամ վտանգը Բիւրտերէն պիտի գայ:

Հայկական եւ քրդական խնդիրները իրարու հետ սերտ կապուած են: Օսմանեան կառավարութիւնը այնքան տկարացած է որ Հայաստանի մէջ հիմակ ուրիշ կանոնաւոր զօրք գրեթէ չունի Համիտի գունդերէն զատ: Ու ասոնց յանդգնութեանը այլ եւս ո՛չ չափ կայ ո՛չ սահման. ամէն պահանջուած կ'ընեն: Հայր ծայրայեղ ճնշումի ենթարկուած, այլեւս անկարող է զիմագրել Բիւրտերուն. Օսմանեան իշխանութիւնը անզօր է ամենազօր Բիւրտին եւ տկարացեալ Հայուն միջեւ տեսակ մը պատուար կանգնելու: Եւ կը վախցուի թէ այդ Բիւրտերը որ հիմակ Մահիկ դրօշակին ներքեւ մտած են, այնպիսի բարբարոտութիւններ գործեն քրիստոնէից դէմ որ 1895-96ի կոտորածները ամենաչնչին դէպքեր նկատուին նոր աղէտներուն քով:

Մեծ տագնապ մը կը պատրաստուի ուրեմն. տագնապ մը որուն պայթումը պէտք է վերագրել Պետութեանց յանցապարտ թուլութեանը: Ռուսիա կ'ոպասէ այդ տագնապին որպէս զի միջամտէ, իր շահերուն նպաստող եղանակաւ մը:

Պ. տը Գոնթանսոն կը կարծէ որ « Ասիական Թիւրքիոյ մէջ նոր կացութեան մը բանալին գուցէ Բիւրտերուն ձեռքը գտնուի: » Հեղինակը իր այս կարծիքը պաշտպանելու համար կը խօսի Բիւրտերուն անցեալին վրայ, անոնց ներկան կը քննէ ի գուշակութիւն ապագային:

Տասը տարիէ ի վեր է որ Թիւրքին եւ Բիւրտին միջեւ յարաբերութիւնները հիմնական յեղաշրջումի ենթարկուեցան: Հայկական շարժումը եւ կոտորածները այս նոր կացութեան զլխաւոր պատճառը եղած են: Այն խեղճ խաշնարած Բիւրտերը որոնք տաս տարի առաջ ցնցոտիներ հագած, վայրահակ զլխով դողդողահար կը սահէին Թիւրք պաշտօնեաներու առջեւէն, երբ իրենց հօտերը լեռը վերագարցնելու համար Ճեզիրէէն կ'անցնէին, հիմակ այդ քիւրտերն են որ խոնարհ Թիւրք պաշտօնէին առջեւէն բարձրագլուխ կ'անցնին կը դառնան: Թիւրքը անցեալին աղէտներուն ներքեւ ճնշուած, ու ապագային սպառնալիցներէն վախնալով, հարկադրուեցաւ կոչուած ընել իշխման բոլոր ուժերուն: Բիւրտին հետ ալ յարմարելու հարկը տեսաւ: Բիւրտերն ալ իրենց օժանդակութեան զինք շատ սուղ կտրեցին: Հիմակ որ գիտեն թէ կացութեան ատերը իրենց են, ըստ

տոյնմ իրօրեալ ու յանդուգն կը վարուին:

Ահեղ վտանգը Համիտի հեծելագունդերէն պէտք է վախնալ: Այդ զինուորեալ քիւրտերը թէեւ պատերազմի ատեն պիտի կազմակերպուէին, բայց խաղաղութեան ժամանակն ալ միշտ կազմակերպեալ մարմին մը կը ներկայացնեն: Յանդուգն, ձեռներէց պետի մը կողմէն առաջին նշան մը երբ արուի, այդ քիւրտերը հաւաքուելու ե գործելու պատրաստ են: Սրտերնուն խորէն կ'ատեն Թիւրքը որ զիրենց անխնայ, չարաչար կոտորած ջարդած է: Այս գարուս առաջին կէտին զեռ անկախ էին Բիւրտերը. օսմանցիները մէկիկ մէկիկ անոնց բերդերը գրաւեցին, ու ջարդերը որոնք 1840ին միջոցները տեղի ունեցան, սարուս կ'ազդեն: Բիւրտերը այդ ամէնը չեն մոռցած: Խալապութիւնը շրթունքներուն ծայրով ընդունած են միայն:

Արդի պարագաներուն մէջ Բիւրտերը շատ բնական կը գտնեն որ իրենց սանձարձակ ազատութիւն տրուի հայերը կողոպտելու, թալլելու, ջարդելու համար: Բայց եթէ Թիւրքերը իրենց վրայ ալ իշխանութիւն բանեցնել ուզեն, գործը կ'աւրուի: Իրենց հարկ չեն վճարեր, օսմանեան դատարաններուն իշխանութիւնը չեն ընդունիր, եւ ի հարկին զինուորական տոեան կը պահանջեն: Թիւրք պաշտօնեան առ այժմ չտեսնելու կը զարնեն, եւ քիչ ատենէն բոլորովին պիտի արհամարհեն զայն: Ու այդ յաւակնայեղց քիւրտը կամաց կամաց կը յառաջանայ դէպի քաղաքական պահանջումները, որոնք Ասիական Թիւրքիոյ մէջ օսմանեան իշխանութեան յառաջիկայ էն վտանգաւոր տագնապը պիտի ստեղծեն:

Արեւելեան խնդիրը սերեմն պիտի վերաբացուի այն պահուն երբ քրդական խնդիրը հրապարակին վրայ երևան գայ: Ու յայտնի է թէ այդ վայրագ, զինեալ ժողովուրդները որպիսի մոլեգին յանդգնութեամբ կ'օտեղծեն այդպիսի խնդիր մը: Կ. Պոլսոյ Կեդրոնական զօրութեան իշխանութիւնը մեծապէս պիտի վտանգուի նախնաւանդ այն պատճառաւ որ Բիւրտը, ինչպէս քիչ մը վերը ըօինք, օսմանեան դրօշակին ներքեւ զինուած է, եւ սուլթանին բանակին էն կարեւոր մէկ մասը կը կազմէ: Կ. Պոլսոյ կառավարութիւնը Բիւրտէն վախնալու հարկին մէջ է: Իսկ եթէ բոլորովին սանձարձակ թողու զայն, քրիստոնէից համար ահեղ պատահարներ կը օպասուին: Եւ ընդունելու ենք թէ Ռուսիա որ Կովկասեան սահմանազլուէն դրացի է Բրդարնակ սահմաններուն, Ռուսիա ո՛չ միայն անտարբեր հանդիսատես մը պիտի չլինայ, այլ ընդհակառակը այդ վայրեանին կը օպասէ միջամտելու համար:

Գրիստոնեաներ եւ Միսիսիականներ գրեցն մեր այս քաղաքականութեան առջեւ առ այժմ միջակէտ մը կը դնենք,

շարունակութեան խոստումով: Թէ՛ Պ, տը Գոնթանոնի
 և թէ ուրիշ հեղինակաւոր անձերու կողմէ Թիւրքիոյ
 նկատմամբ հրատարակուած քաղաքական տեսութիւն-
 ները բազմաոտ շահեկան թելադրութիւններ կը ներ-
 շընչեն հայ ժողովրդին: Մեր մեծագոյն պարտակա-
 նութիւններէն մէկը համարած ենք այդ կարգի զրքերու
 եւ յօդուածներու հնար եղածին շափ մեծկակ տեղ մը տալ
 այս էջերուն մէջ: Ժողովուրդը լուսաբանուելով է որ պի-
 տի կարենայ իր օգուտը մարթել:

Այս հանդէսին ընթերցողները քաջ գիտեն թէ ո՛ր
 է Հայութեան համար էն մեծ վտանգը: Ահա Ֆրանս-
 սացի մըն ալ, եւ շա՛տ լրջախոհ ու խղճամիտ Ֆրանսացի
 մը, Ռուսիոյ դաշնակից ազգի մը գաւակը, կը ձայնակցի
 ամէն անոնց որոնք ասիական Թիւրքիոյ քրիստոնեա-
 ներու ազգայնութեան համար կորուստի վախը Ռուսիոյ
 կողմէն կը տեսնեն: Ֆրանսացիները որքան որ ալ Ռու-
 սիոյ նիպակակից, բայց եւ այնպէս Արևելեան խնդրին
 մէջ կա՛մ զգուշաւոր և կասկածատ չէզօքութիւն մը կը
 պահեն իրենց դաշնակցին նկատմամբ, կա՛մ ուղղակի յար-
 ձակումի կը դիմեն:

Հայաստանի ապագային համար քրդական նոր վը-
 տանգը զոր Պ. տը Գոնթանոն ինքն ալ իր կարգին մատ-
 նանիշ կ'ընէ, ամենամանր կացութեան մը հանդէպ կը
 գնէ հայ ազգը: Ատենէ մը ի վեր է որ հանդիսատեսներ
 ենք «Բրդական խնդրի» մը նախապատրաստութեանց,
 որուն հետեւանքները ահեղօրէն սպառնալից կը թուին:
 Բրդասիական զգացումի յանկարծածին արտայայտու-
 թեան սկզբնաւորութիւնը տարօրինակ երևոյթ մըն էր որ
 այս էջերուն մէջ ուշադրութիւն գրաւեց: Բրդական լրագրի
 մը հրատարակութիւնը, քրդական սպառնալիքներու պայ-
 թումը, քրդապաշտպան կարգ մը հրատարակութիւններ,
 հայ ցեղը վայրագ քիւրտին հովանաւորութեանը ներքեւ
 դնելու ջանքեր, ամէնքն ալ նախապատրաստական աշ-
 խատութիւններ են սրոնք քաղաքական հեռաւոր նպա-
 տակի մը կը ձգտին, նպատակ զոր Պ. տը Գոնթանոն
 յօտակօրէն երևան կը բերէ: Օտար ձեռքը որ հայկական
 խնդիրը օտար շահերու ծառայող ուղղութեան մէջ գը-
 նելու կը հետամտի, չենք կրնար տարակուսիլ թէ այդ
 ձեռքն է որ կը վարէ քրդական խնդիրը:

Չենք կարող պնդել թէ քրդապաշտպան փաստաբան-
 ները ամէնքն ալ գիտակցօրէն կը դաւեն Հայ ազգին ի-
 րական շահերուն դէմ: Բրդական խնդրի մը օտեղծման
 ջանքերուն մէջ իրենց բաժինը ունին տգիտութիւնը և թե-
 թեւամտութիւնը: Հայ քաղաքականութեան կեզըրնը հի-
 մակ Եւրոպա է: Ու կը զգացուի թէ Ֆրանսայի մէջ երե-
 ւան եկած հայապաշտպան զգացումներն ու գաղափար-
 ները, որոնք թէ ֆրանսակազն և թէ հայկական շահերուն
 համաձայն են, օրէ օր աւելի զօրանալով ապագային
 կրնան ծանր արգելքներ լարուցանել կարգ մը ծրագրե-
 ներու առջեւ: Այս վտանգին դէմ գաղտնածածուկ միջոց-

ներ ձեռք կ'առնուին, կը վախնանք թէ մեր դատին բա-
 րեկամ ֆրանսացիներէն ոմանք թակարգը իյնան: Յուսանք
 որ Պ. տը Գոնթանոնի գիրքը, եւ նմանօրինակ ուրիշ
 հեղինակութիւններ յաջողին չէզօքացնել մեր շահերուն
 հակառակող ձեռնարկները:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐԵՐԸ

Մեր նախորդ թիւին «Նոր Հրաւեր մը» վերնագրով
 յօդուածին մէջ Երիտասարդ Թիւրքերու հետ համաձայ-
 նութեան մը խնդրին վրայ խօսեցանք: Ահա 1896էն ի վեր
 է որ Երիտասարդ Թիւրքերուն հետ պարբերաբար բա-
 նակցութիւններ կը կատարուին, առանց սակայն ո եւ է
 արդիւնքի: Անշուշտ զօրաւոր պէտք է եղած ըլլան եր-
 կու կողմի բարի կամեցողութիւնները չեզօքացնող պա-
 ճառները:

Մեր նախորդ թուովը անգամ մը ես յիշեցուցինք այն
 զլխաւոր երկու նկատումները որոնք մեր եւ Երիտասարդ
 Թիւրքերուն միջեւ անհամաձայնութեան զլխաւոր խոչըն-
 դոտներն են: «Երիտասարդ Թիւրքերու կուսակցութիւնը
 իր ամբողջութեանը մէջ տակաւին ոչ անշահախնդիր քա-
 ղաքական հայրենասիրութեան հաւատարմութիւնը ընծայեց,
 եւ ոչ ալ բարենորոգումներու խնդիրը լայն մտքով ըմբռ-
 նեց:» Պէտք չենք զգար չափազանցօրէն ծանրանալ ա-
 ռաջին նկատումին վրայ: Բայց վերջապէս հարկ է ընդու-
 նիլ թէ Երիտասարդ Թիւրքերուն հետ մեր յարաբե-
 րութեանց մէջ շատ զգուշաւոր շարժելու իրաւունք ու-
 նինք երբ գրական տաղանդի եւ վարչական յատկութեանց
 արժանիքներու համբաւը վայելող Մուրատ պէյ մը քիչ
 մը ատեն իսկ չկարենալով տոկալ իր կնոջը կարօտին
 և գրամական անձկութեան, կը վերադառնայ Երլարզ-
 երք՝ իբր պետական անձնաւորութիւն հանրածանօթ Տա-
 մատ Մահմուտ փաշա մը, միկնոյն հարկերէն վարեալ
 միկնոյն ճամբէն ընթանալու կը պատրաստուի: Ատոնք
 ո՛չ պարզ զինուորներ են Երիտասարդ Թիւրքերու կու-
 սակցութեան մէջ, եւ ոչ ալ երկրորդական աստիճանի
 օպաներ. ալ՛ վարիչ պետեր: Իսկ զինուոր ու օպայ դա-
 սալիքներու ո՛չ թիւը կայ ո՛չ ալ համարը:

Կուգանք երկրորդ խոչնդոտին: Երիտասարդ Թիւր-
 քերը մենէ Երլարզ յօդուածին ուրացումը կը պահանջեն,
 և Միտհ աեբան օահմայնադրութեան անպայման ընդու-
 նելութիւնը:

Ո՛ր և է հայ անհատ կամ հաւաքական մարմին կաթ-
 իշխանութիւն, իրաւասութիւն մը չունի Երլարզ յօդուածին

վրայ: Պերլինի դաշնագրին հայապաշտպան տրամադրութիւնը պայմանագրութիւն մըն է մեծ պետութիւններուն և օսմանեան իշխանութեան միջեւ, առանց հայկական երաշխաւորութեան: Դուրը Հայաստանի նահանգներու մէջ բարեկարգութիւններ պիտի ներմուծէ եւ զանոնք պիտի հաղորդէ մեծ պետութեանց: Օսմանեան իշխանութիւնը համարատու է, պետութիւնները՝ համարատու: Մենք հայերո այս համաձայնութեան մէջ պարզապէս ի հարկին ազերատուր կամ զինեալ խնդարկունք ներկայանալու իրաւունքէն զուրո ուրիշ ո եւ է առանձնաշնորհում չենք վայելի: Եթէ Հայաստան ո՛ր և է միջոցաւ, նոյն իսկ թիւրք իշխանութեան նախաձեռնութեամբ սկսի բարեկարգուիլ, այն ատեն ՅԱՐԳ յօդուածին կարեւորութիւնը ինքնին կը չքանայ: Ուր չարիք մը չի կայ, հոն դարմանի պէտք ալ չի կայ:

Միտհատեան սահմանագրութիւնը, եթէ երբեք անոր զործադրութիւնը հնարաւոր ըլլայ, իր օգուաները կրնայ ունենալ, պայմանաւ որ օսմանեան կայսրութեան նահանգները իրենց պատմական կեանքին պահանջումներուն համեմատ տեղական ինքնավարութեամբ կազմակերպուին: Վարչական միօրինակ դրութիւն մը անզործադրելի է թիւրքի մէջ, վասն զի նահանգները իրարու բոլորովին օտարօտի են իրենց ազգագրական և պատմական կեանքերով: Օրինակներ: Կրետէի ժողովուրդը ամբողջովին մէկ ցեղ մը կը կազմէ, մէկ լեզուով: Եւրոպայէ մացեղ ժողովրդին մէկ փոքր մասը կրօնքով մահմետական է, իսկ ստուար մեծամասնութիւնը քրիստոնեայ: անդին Մակեդոնիա կը պարունակէ զանազան լեզուներով, զանազան ցեղերով, զանազան կրօնքներով ժողովուրդներ որոնք իրարու հակառակ շահեր ունին: Վարչական կազմակերպութիւն մը որ կրետացիները կրնար զոհաճնել, անբաւական է Մակեդոնիոյ համար: Եւ մէկ կը պատկանի մէկ ցեղէ, մէկ կրօնքէ, մէկ լեզուէ ժողովրդի մը: միօրինակ օրէնսդրութիւն մը եւ խղճամիտ ու խելացի մահմետական իշխանութիւն մը կը բաւէ անոր բարեբաւարութեանը: Հայաստանի ժողովուրդները զլիարատապէս հայ եւ քրիստ են, հետերնին ունենալով թիւրք փոքրամասնութիւն մը: Բնականաբար մենք ո՛չ այն օրէնսդրութեան պէտք ունինք, ո՛չ այն վարչութեան որոնք Եւրոպայէ կրնան զոհաճնել: Օրինակները չենք բազմապատկեր:

Օսմանեան կայսրութեան վերանորոգումին ու փրկութեան հիմը տեղական ինքնավարութեան սկզբունքին մէջ պէտք է փնտռել: Աւելորդ է ըսել թէ անհրաժեշտ պէտք մըն է կեդրոնական զօրեղ իշխանութիւն մը, ընդհանրական շահերու վերին վարչութեան իրաւասութեամբ, և այդ իշխանութիւնը կրնայ սահմանադրական հսկողութեան ներքեւ կատարել իր վրայ ծանրացած պարտականութիւնը:

Երիտասարդ թիւրքերը և ոչ իսկ մեր տեղութիւնները

զոնէ քննութեան առնել կը յօժարին: Իրենց պահանջումներուն կոյր հնազանդութիւն կը պահանջեն մենէ, որով կը հատուտեն թէ մեզի հետ վիճաբանելու համար հաւատարմութեան սկզբունքը չեն ընդունիր: Պարզօրէն՝ մեզի հպատակելու էք, կը յայտարարեն: Ստրկացումը ուրեմն Եւրոպայէն սկսիլնք:

ՓՃԱՑՈՒՄ ՍԸ

Երիտասարդ մը որ իբր ուսանող Եւրոպա կը զրտնուի, մեզի կը հաղորդէ հետեւեալ տեղեկութիւնները որոնք ցոյց կուտան թէ նոյն իսկ եւրոպական թիւրքի մէջ օսմանեան իշխանութիւնը ինչպէս քրիստոնեաները հանդարտօրէն թալլել զիտէ, նպաստաւորելու համար թիւրքերը: Փճացումներու զրուագ մը որ անդին հետուն Հայութեան հողին վրայ կատարուած ամէն օրուան յափըռտակութեանց վրայ գազափար մը կրնայ տալ:



« Դեռ տասնեւչորս տարեկան էի, երբ հայրս 1390ին մօրաքրոջս ամուսնին հետ ընկերակցութեամբ Կ. Պոլսոյ մօտերը մեծկակ ազարակ մը կը գնէր 10,000 օսմ. սոկիի արժողութեամբ: »

Երբեք մտքէս չեղլիւր այդ անիծեալ օրը: Ազարակը մեզի ծախող թիւրքը մեր տան պարտէզին վրայ նայող սենեակը, բազմոցին վրայ ոսկիի կոյտի մը առջեւ նստած կը հիանար, եւ անշուշտ կը խորհէր թէ ինչ միջոցով կարելի պիտի ըլլար հնարեղածին չափ շուտով մօխել այդ ոսկիները:

Ազարակը չոր վիճակի մէջ կը յանձնուէր մեզի, գրեթէ պարզ հող մը: Ինչ որ մէջը կար ամէնքն ալ արդէն ծախուած լինցած էր: Սակայն մերոնք քիչ ժամանակի մէջ ամէն բան կարգի դրին: Հին փրատակ շէնքը վերանորոգուեցաւ, գոմ շինուեցաւ, ինչ որ պէտք էր անուեցաւ: Հունձքը առաջին տարին բաւական լաւ եղաւ: Որոշուեցաւ Եւրոպայէն երկրագործական մեքենաներ բերել տալ, որոնցմէ յաջորդ տարին պիտի օգտուէինք անելի շատ արդիւններ ձեռք բերելու համար: Ու այդ գործիքները բերուեցան:

Հազիւ թէ տարի մը բոլորած էր և հաւ կը լռէինք որ աւագակախումբեր երևան գալով, շրջականերու հարուստ ազարակատերերը լեռները կը տանէին, եւ իբր փրկանք խոշոր գումարներ պահանջելով ու ստանալով կը թողուին զանոնք: Զգուշաւորութեան պէտքը զգալի էր եւ

մերիններուն համար: Հայրս ամառուան մէջ հազիւ թէ մէկ երկու անգամ ագարակ կ'երթար: Բայց այդ այցելու, թիւններն ալ երկար չտեսցին: Ֆրանսական ընկերութեան մը պատկանող ագարակին գործակատարը լեռ տարուած էր. սուլթանը ֆրանսական գեոպոնին ստիպմանը ներքեւ հարկադրուած էր 10,000 ոսկի աւազակներուն ղրկելով փրկել այդ ֆրանսացին: Միենոյն ժամանակ մեր ագարակին պահապաններն ալ հօրս լուր կը բերէին թէ 10-12 մարդէ բաղկացած աւազակախումբ մը միշտ մեր ագարակին շուրջը կը զեզերէր, և մինչեւ իսկ մեր հովիտներէն մէկը ձեռած էին, իմանալու համար թէ մենք երբ ոգարագ կ'երթանք կուգանք: Այլ եւս մեզի համար կատարեալ անխոհեմութիւն էր այդ կողմերը երեւնալ:

Քանի մը ամիսներ անցան. հերկելու ճիշտ ժամանակն էր. հայրս օր մը ամէն վտանգ յանձն առած որոշեց անգամ մըն ալ այցելել իր ագարակը: Արևոտ գեղեցիկ օր մըն էր. հօրս միացանք ես ու ընտայրս: Հերկող մեքենաները կը գործէին նայն օրը, և մենք զանոնք տեսնելու համար ուղղուեցանք զէպի անոնց կողմը: Բայց ազիւ Չ է ըստորդէ մը ի վեր մեզենաներուն ըով կը գանուէինք, և ահա պահապանները ագարակին պաշարման լուրը բերին: Խուժք մը աւազակներ մեր գալուտը իմանալով, եկած էին մեզի լեռը տանելու: Անմիջապէս ձի հեծնելով շունչերնիս մօտագոյ ըտղաց մը առինք: Այլևս ո՛չ հայրս ո՛չ ընտայրս կարող էին ագարակ երթալ, այս բացակայութիւնը չորս տարի տեսց:

Ագարակին մօտերը գտնուող թիւրք եւ մուհաճիր գեղացիները օգտուելով մեր բազակայութենէն, կառավարական գրգռումով եկած էին մեր արտերը իբր իրենց ապրանքը վարել եւ ցանել. մինչեւ իսկ մեր ցանածներն ալ իրենք ըզղեցին: Ագարակին երեք չորս պահապանները անկարող էին արգիլել այս յափշտակութիւնը: Հայրս պարտաւորուեցաւ կառավարութեան զիմել: Պատասխան ստացանք թէ պէտք էր գատարանի զիմել: Ճարահատած գացինք դատարան, որուն ցոյց տուինք մեր սէնէտները որոնք կը հաստատէին մեր սեփականատիրութեան իրաւունքը: Մեր բոլոր շահը այն եղաւ որ չորս ժանտարմա ղրկուեցան ագարակը, թիւրքերուն պատուիրելու որ ագարակին օ եւ է քննա չհասցնեն, ապա թէ ոչ պիտի պատժուին: Բայց միենոյն ամեն ժանտարմաները գաղտնապէս կը խրատէին թիւրք գեղացիները կարելի եղածին չափ կողոպտել կեաւութիւն ագարակը: Ինչպէս կարելի էր որ Մահմէտին հաւատացող մը հազիւ թէ իր օրական ապրուտը ճարելու կարող ըլլայ, և անգին կեաւութիւն մեծ ագարակ մը ունենայ: Ամէն լաւ բան մահմէտականինը ըլլալու է թիւրքիոյ մէջ:

Ժանտարմաները զեղէն այնինչ հեռացան, եւ ահա տեղին հօճային հրամանաւր, թիւրք գեղացիները յափըշտակեցին մեր ոչխարները, եւ հովիտներէն երկուքն ալ սպաննեցին:

Այլ անտանելի էր կացութիւնը. հայրս ալ սրտի վաճառուը որոշեց, բայց որու որ զիմեց հարուստներէն, ո՛չ ոք համարձակեցաւ գնել: Վերջապէս պայտատական թիւրք պէ մը ոչինչ գնով մը գնելու յօտարեցաւ: Ու մենք մեծկակ հարստութիւն մը կորսնցնելու դատապարտուեցանք:»

* * *

Այս յափշտակութիւնը գրեթէ կ. Պոլսոյ գուռը պատահած է, ու այնպիսի նահանգի մը մէջ որ Հայաստանէ շատ հեռու գտնուելով, գաղթական հայուն ընչ մը աւելի ապահովութիւն կ'ընծայէ քան թէ իր բնավայրին մէջ: Բայց մահմէտականին համար հայրենի երկրէն ու մայրենի ցեղէն առաջ կրօնքը կայ. կեաւութիւնը ամէն տեղ կեաւութիւն է. մահմէտականը ամէն տեղ մահմէտական է, եւ կեաւութիւն բացարձակ տէրն է թիւրքիոյ մէջ:

Հայաստանի մէջ սակայն այդ յափշտակութիւնները ո՛չ չափ ունին, ոչ սահման: Հայը իր ստացուածքին մէջ կողոպտելու գրութիւնը կառավարական բացարձակ քաղաքականութիւն է, քաղաքականութիւն օր չափազանցօրէն հաճելի է իրամին ու ընտրտին: Այն Հայերը որոնք մեր մէջ գատակարգային խտրութիւններ յարուցանել կ'ուզեն այն պահուն երբ մահմէտական թշնամիին զէմ կուուելու պարտաւոր ենք, այդ հայերը սխալներու մեծագոյնը կ'ընեն: Միայն գեղացին չէ որ կը կողոպտուի, կը կտրտուի, այլ՝ ունեւորն ալ. մանաւանդ թէ ունեւորը:

Միենոյն ամեն մեր ունեւորներն ալ ընդհանուր կերպով հայ ազգութեան, եւ մասնաւոր կերպով ալ իրենց շահերուն զէմ կը գործեն, հակառակելով անոնց որոնք բարենորոգումներու գաաին համար կը մարանչին: Ու անոնք օր չէզոք կը մնան այդ կռիւներուն մէջ, անոնք ալ շատ խելացի գործ մը չեն ընել: Մահմէտականութիւնը իր ամբողջ ուժը մեր զէմը կը հանէ, առանց չէզոքը, կուտղը, աղքատը, հարուտը զանազանելու: Խուժք մը հայեր միտ մինակ մնալով այդ թշնամիին զէմ գուցէ չկարողանան կատարեալ յաջողութեամբ կուուիլ: Ու եթէ պարտուին, ալ չէզոքներն ալ անպաշտպան պիտի մատնուին թշնամիին ձեռքը:

Տարրական ճշմարտութիւններ այս ամէնքը, որոնք սակայն հայ ուզեղներուն մէջ շատ զժուարութեամբ ապտոտանարան կը գտնեն:

ԱՊՏԻԼ ՀԱՄԻՏ

ՆԵՐՔԻՆ ՄԱՐԴՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԸ

Բ.

Ապտիւ Համիտ ուշ կը պաակի, կարելի եղածին շափ
 քիչ քնանալու փափաքով: Սրուան աարածամիլը զինքը
 կ'ահաբեկէ, և մութը զինքը կը խելայեզէ: Ուտտի եղիցի
 յոյսի հրաշքը ամէն զիշեր կ'իբրականանայ փափաշահին
 բնակարանին մէջ. պալատին ամէնէն պզտիկ սենեակ-
 ները, ամէնէն փոքր նրբանցքները ցերեկուան պէտ լու-
 սաւորուած են մայրամուտքէն մինչեւ արեւուն ծագումը:
 Ելժէ, զիպուածաւ մարած լամպար մը տեսնէ, անմիջա-
 պէս այլ պատահարին պատճառը կը փնտաէ և մանրա-
 կրկիտ քննութիւն մը կը բանայ: Արդէն, լոկ մթութեանը
 համար չէ որ կը սոսկայ զիշերէն, այլ նաև լուսութեանը
 համար, և ատկից զպացած ոտքսափէն ազատելու հա-
 մար, յաճախ պալատին նուազաթուսքը նուազել կու-
 տայ մինչեւ ուշ տեսն, կամ թէ կը հրամայէ որ պահակ-
 ներ անյուզ պտըտին իր պորմին առջեւ որպէս զի հո-
 ղին վրայ լծնյացող ոտքերնուն զրնջիւնը ապահով իր
 անհանդարտ ականջը:

Վերջապէս, աչքովը վտտահ ըլլալէ յետոյ թէ ամէն
 բան կարգին է, և ձեռքովը գոցելէ յետոյ իր յարկին զըռ-
 ները որոնց բալլիքները վրան կը պահէ, Ապտիւ Հա-
 միտ պաակելու կ'երթայ: Վնանալէ առաջ, ընթերցա-
 նութիւն մտիկ կ'ընէ իր կախնեղբայր Իսմէթ պէյէն,—
 նիհար, ածգոյն ու տգեղ պզտիկ մարդ մը, որ այնքան
 տարօրինապէս կը նմանի իր արքայը որ իր մասին բեր-
 նէ բերան կը պատմուի թէ Սէլամըքի արարողութեան
 մէջ է. Վեհափառութեան տեղը կը բռնէ հրորո սա ան-
 հանգստութեան մը պատճառաւ չկարենայ Յէլամըքի
 երթալ: Երբեմն երկրորդ հանդերձապետ Էլիաս պէյի կամ
 իր սիրական սենեկապետներէն Ֆայիզ պէյի կ'իյնայ վե-
 հապետին ընթերցանութիւն ընելու պատիւը:

Հոռ մէկ քանի խօսք ընենք Ապտիւ Համիտի գրա-
 կան նախընտրութեանցը վրայ:

Տարակոյս չկայ թէ ամէնուն ու ամէն բանի վրայ
 խմբագրուած և ամէն օր իրեն ներկայացուած անհամար
 ձանձրանալի տեղեկագիրներն են որ միապետին համար-
 մանը մէջ առաջին տեղը կը բռնեն: Վերջին տարիներս
 մանաւանդ, այլ քամին հեղինակութեանց ընթերցումը
 իր բոլոր պարագայ ժամերը կը գրաւէ: Այդ մասնաւոր
 տեղէն զուրո, Սուլթանը, իր գահակալութեան օկիզքէն

ի վեր, յատուկ նախընտրութիւն մը ցոյց տուած է զոնա-
 պաններու գրականութեան համար. Բանտն տիւ Թէն
 ոայի, Կզավիէ տը Մանգէրէնի եայլն վէպերը, որոնց
 նիւթը անյողողող կը գտնայ բանարարութեան, սպա-
 նութիւններու, տղոց հափափութեան, կաակներու փո-
 խանակութեան, հրկիզումներու, և ուրիշ ահաբի եղեո-
 ներու շուրջը, վերին առաիճան կը շահագրգռեն զինքը:
 Իր գրադարանապետը, Գասաբի, սովորաբար պաշտօն
 ունէր թիրքերէնի թարգմանել այդ բազմաաատ արձակը,
 ինչպէս նաև բովանդակութիւնը Բարիզի Դատարաններու
 լրագիրին, որուն աակալին բաժանորդ է Ն. Վեհափա-
 րութիւնը:

Ընդհանրապէս, սօրին հոգեբանութիւնը, հոշակաւոր
 դատերը, պատմական գրքերն ուր նկարագրուած են մեծ
 անձնաւորութեանց և Պետութեանց զուխներու բանի
 մահեր, ապտամբութիւններ, խոսովութիւններ, զօպում-
 ներ,— մէկ խօսքով ամէն բան որ մարդկային բնութիւնը
 ցոյց կուտայ իր ամէնէն սոսկալի երևոյթներուն ներքեւ,
 բնութիւն, ատելութիւն, խորամանկութիւն, զօշաքաղու-
 թիւն, անարդարութիւն, ցածութիւն, անգթութիւն,—
 միշտ հրապօր և շահեկանութիւն ունեցած է Ապտիւ
 Համիտի մտքին համար:

Լուրջ գործերէն, զոր օրինակ իմաստասիրական կամ
 քաղաքական, Մաքիավէլիի իշխուան է ամէնէն աւելի օր-
 րածը. Ֆիորէնցայի պատմաբանին գործը, կարելի է
 ըսել, փատիշահին բարձի գիրքն է:

Հօղմարգելով մը իր ընթերցողէն բաժնուած, Ապտիւ
 Համիտ, իրեն անկողնի տեղ ծառայող բազմոցին վրա-
 յէն անխօսուկ մտիկ կ'ընէ, երբեմն զիշերուան մէկ մեծ
 մասը, մինչեւ որ վերջապէս, յօգնութեանէ յաղթուած,
 կը քնանայ— քիչ մը ատեն:

Իր քունը անհանգիտ, յուզեալ, շափազանց թեթեւ
 է: Իր ջղոտ ու գերազուած բնութիւնը անընդունակ
 է հանգիստի: Սուլթանը յաճախակի կ'արթննայ, և այն
 ատեն միայնութիւնը անտանելի է իրեն: Մերթ, լոկ
 խօսելու պէտքէն մղուած, վտտահութիւնը վայելող մարդ
 մը կը կանչէ. մերթ, յանկարծակի մատանջութենէ մը
 բռնուած, խորհրդական մը բերել կուտայ, որուն հետ
 կը խորհրդակցի: Եթէ զէշ երազէ մը սարսափած ըն-
 դատ արթննայ, քովը բերել կուտայ կէս—աճաբար
 կէս—կախարդ մարդ մը—ինչպէս օրինակի համար հըռ-
 շակաւոր Էպիւ Հիւտան— և զինքը վրդովող երազը
 մեկնել կուտայ: Երբեմն զիշերուան մէջտեղ, յանկարծ
 իրեն կը բերեն ոտիկանութեան նախարարին կամ ուրիշ
 մեծ լրտեսի մը մէկ օտիպողական տեղեկագիրը, ու
 այդ պարագային՝ վեհապետին տուած հրամանները ա-
 մենածանր խտտութեան զրոշմը կը կրեն:

Յաճախ մէկէն ի մէկ կ'արթննայ պաակած տեղէն, և
 պատշգամ մը երթալով, հեռադիտակով մը անձկօրէն կը
 պրպակէ ծովը, շրջակայ լեռները, անհուն հորիզոնը:

կարծես ապահով ըլլայու համար թէ ամէն բան հանդարտ է շորո դին և թէ անակնկալ թշնամիներ Թմառազէն չեն քալեր Երլարդի վրայ, որուն անհուն դարաստանին մէջ գիշերն ի բուն անդու ման կուգայ կայսերական անձնապահ զօրքի վաշտ մը:

Սովորական ատեններ, այս է ընդհանրապէս Ապտիւ Համիտի կենցաղը: Բայց այս սովորութիւնները, իր կեանքին այս յարաբերական կանոնաւորութիւնը բողոքովին տակնուվրայ կ'ըլլան երբոր վրայ կը հասնի վրէժ զովիչ մասնութիւն մը, խուճապական լուր մը, սպառնացող վտանգ մը, քաղաքական ծանր դժուարութիւն մը, անձնական ցաւատանջ հոգ մը: Ան ատեն, ա'ջ ո'չ պտոյտ, ո'չ հարէմի այցելութիւն, ո'չ երաժշտութիւն, ո'չ նշանառութիւն, ո'չ տիւհանգիստ, ո'չ ախորժակ, ո'չ իսկ քուն: Շատ անգամ քառսուն ութ ժամ եւ աւելի կեցած է առանց աչքը բացելու, ճարտարաւորելով յատակագիծ մը սարքելու ընդդէմ թշնամիի մը, կամ ձօնաշուտ վտանգի մը առաջը աննելու:

Այս երկարատեւ տեղութիւնները, այս ըկող մտահոգութիւնը, բարոյական եւ ֆիզիքական այս չարախնջութիւնը իր մէջը առաջ կը բերեն ջղային ահռելի տագնապներ: Ան ատեն վայրենի կը դառնայ, եւ վա'յ իրեն ձօնեցողին:

Այդ բուրհանները, զորոնք կը ջանայ խաղաղեցնել թերով կամ վաշիտիանով, բաւական յաճախաբար են: Այդպէս երկարատեւ շրջան մը ունեցաւ, դեռ մէկ քանի ամիս առաջ, իր քեռայրին՝ Տամատ Մահմուտ փաշայի և անոր երկու որդիներուն աղմկալի փախուստէն յետոյ, փախուստ որ անգամ մը եւս ամբողջ Եւրոպայի ուշադրութիւնը հրաւիրեց համիտեան դրութեան վրայ: Եւրոպական լրագիրներուն միջոցաւ Մահմուտ փաշայի իր կայսերական աներձագին դէմ ուղղած յարձակումները, անողորմ ճշմարտութիւններով լեցուն նամակները, իր անուանը շուրջը յարուցուած աղմուկը, քանի քանի անգամ խեղճ Ապտիւ Համիտը անզօր կտտաղութեան աագներու մէջ զրին, զորոնք ոչ մէկ դեղ կրցաւ հանդարտեցնել:

Բայց փատիշահը ամէն զգուշութիւն ձեռք կ'առնէ որ այս բուրհաններուն լուրը հասարակութեան ականջը չհասնի: Նոյնը կ'ընէ նաև իր առողջութեան կրած օ և է տկարացման համար, որովհետեւ չի սիրեր որ ատոր մտին խօսուի, և, գահակալութենէն ի վեր, պաշտօնապէս ո'չ հիւանդ եղած է, ո'չ իսկ անհանգիստ: Ճշմարիտ է որ իր ջղային կազմուածքը զիմացկուն է, և թէ մինչեւ հիմակ կեանքը վտանգի մէջ եղած չէ, թէ պէտ ընդունակ է թոքախտի օւտից մեռած են հայրն օւ մայրը: Բայց առողջապահութիւնը և խնամքը այդ կողմէն ամէն վտանգ հեռացուցած են իրմէ: Բժշկու-

թեան ծանօթութիւններ ունենալով, ինք կը զարմանէ իր անհանգստութիւնները, որով կ'ազատի ինքզինքը բժիշկներուն քննել տալէ: Երբեք մեծ վստահութիւն ունէր իր բժշկապետ Մավրոյէի փաշային վրայ, որ այսօր շատ ծերացած է եւ պաշտօնանկ եղած, այն ամբաստանութեամբ թէ Երլարդի պատմութիւնը կը գրէ գաղտնի: Երբոր դեղի պէտք ունենայ, Ապտիւ Համիտ իր իսկ գրած գեղագրին վրայէն պատրաստել կուտայ զայն իր դեղագործ Պէքիր էֆէնտիին: Կը պատմեն թէ երբօր ստամոքսի անհանգստութենի նեղուի, իր շուրջը զրանուողիերէն մէկ քանի հոգիէ թաւառ եւտիէնի բազդիները կը խնդրէ, զորոնք ամէնը մէկէն պարկի մը մէջ կը դնէ: Ետոյ, ձեռքը կոյտին մէջ խօթելով, բոտ բազդի հատ մը կ'առնէ, այդպէս ապահով ըլլալով թէ թունաւորուած չէ այն:

Այս ամէնէն ետքը, ոչ ոք զարմանալու է թէ, քսանըհինգ տարուան գահակալութենէ յետոյ, Ապտիւ Համիտ, հակառակ անձին տարած բոլոր խնամքներուն, վաղահասօրէն ծեր է: Վերին աստիճանի տկար է, եւ կամքի ու ջիղերուն ուժօքն է որ ինքզինքը կը բռնէ: Իր հատած մարմինը կմախքի նիհարութիւն մը ունի: Ասէն միջոցներով ի զուր փորձել յետոյ քիչ մը գիրութիւն վաստկել, չկարենալով բուժել այդ կատարեալ երիթացումը, անոր դէմ կը մաքառի բացարձակապէս հեռու մնալով ամէն բանէ որ կրնար անոր նպաստել: Այդպէս, թէպէտ շատ կ'ախորժի մարձէ ու շոգիի բաղնիքէ, ինքզինքը կը զրկէ ատկից, վախնալով որ ծանրութենէն մէկ քանի կրամ ալ չկորսոցնէ:

Բոլոր բռնաւորներուն պէս, Ապտիւ Համիտ տարապայման սոսկում մը ունի մահուընէ, եւ, հետեւաբար, ընդհանրապէս ամէն հիւանդութիւններէ, — բայց մասնաւորապէս տարափոխիկ հիւանդութիւններէ: Ատոնցմէ սնապաշտ վախ մը ունի որ շատ տարուան զօրծ է: Դեռ կայսերազուն իշխան եղած ատենը, օր մը, իր Քէտտահանէի կալուածին մէջ պտըտած ատեն, գուշակ գնչուհիի մը հանդիպեցաւ, որ, իր խնդրանքին վրայ, իր ապագան կանխատեսեց, և, տարօրինակ բան, ճիշտ օւ ճիշտ մարգարէացաւ ամէն բան որ յետոյ տեղի ունեցաւ, — իր արագ գահակալութիւնը՝ ծանօթ եղերական պարագաներուն մէջ, երկարատեւ տիրապետութիւն մը, պատերազմներ եւայլն: Բայց աւելցուց թէ սուրճ թանը պիտի մեռնէր « զուրօքն գալիք հիւանդութենէ մը: » Ուտի, քոլերան ու ժանտախտը աւելի ոխերիմ թշնամի շունին քան ինքը: Եթէ կ' Պսիլո համաճարակի ատեն առողջապահական զրեթէ կատարեալ կարգուսարք մը և մանրէաբանական կատարեալ աշխատանոցներ օճնի, ատիկա կը պարտի Քէտտահանէի գնչուհիին և սուլթանին դիւրահաւանութեանը:

Ինչպէս կը տեսնուի, թերեւ երբեմն լաւ է ժողովրդի մը համար որ իր բանաւորը թիչ մը վախկոտ ալ կատարուեցան:

ԸԱՄ՝

Կարելի տարափոխութեան մը դէմ ինքզինքը ապահովելու համար՝ զգուշութիւն չի կայ որ ձեռք չանէ: Բնականէն շատ մաքրասէր, շատ բծախնդիր, ամէն վայրկեան կը լուսցուի—իր յարկերուն ամէն անկիւն, ներք աղբիւրներ կան—, ամենամեծ ուշադրութիւն կը նուիրէ առողջապահութեան ու ապանեխութեան խնդիրներուն վերաբերող ամէն բանի, և սաստիկ շահագրգռութեամբ կը հետևի մանրէաբանութեան յառաջդիմութեանցը: Կարելի չէ երևակայել թէ միջրոպատեցոյց, քիմիք մինչեւ ինչ ծաղրելի զգուշութիւններու կը մղէ զինքը: Օրինակ մը տալով շատանանք. Ն. Վեհափառութեան ձեռքը հասնելիք բոլոր թղթերը, տեղեկագիրներն ու պաշտօնագրերը նախապէս ապանեխական ջերոցէ մը կ'անցնին, եւ որովհետեւ ամէնքն ալ կ'ընում պահարանի մը ներքև կը փոխանցուին, ջերոցին տաքութեան մէջ հալելով մեղրամոմին թողած կարմրորակ արաւէն է որ յետոյ քարտուղարներուն գրասենեակներուն մէջ կը ճանչնան այն թուղթերը որոնք օգոստ ափա մենամուրհին ձեռքէն անցած են:

Ճ. ՏՈՒՒՄ

(Շարունակելի)

ՌՈՒՍԻՈՅ ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Ռուսիա յեղափոխական մեծ տաղնապի մը մատնուելու վրայ է: Երկու ամիսէ ի վեր է արդէն որ ուրիշ ուսանողներու եւ գործաւորներու միաբանութիւնը սպառնալից շարժումներու մէջ է: Վերանորոգիչ մեծ միպատան լեւ թւութեայի դէմ ուրիշ եկեղեցիին կողմէն արձակուած բանադրանքը հրացանի հարուածի մը պէս, որ զիշերուան խոր լուսութեան մէջ յանկարծ կը պայթի, ամբողջ Ռուսիան ընդօտեցուց: Բեղրպուրկ, Մոսկուա, Խարքօֆ համալսարանական ուսանողները զլուսնին վեր վերցնելին, ըմբոստացման գոռոզութեամբ զինուորական բիրտ ուժին դէմ կանգնեցան: Միակեան կառավարութիւնը սարսափեցաւ: Հանրային կրթութեան նախարարին սպաննումը, Միւհոզի նախագահին կեանքին գէմ փորձ մը շուարեցուցին երկրին կառավարիչները: Չարը պարտաւորուեցաւ ուսանողներուն զիջողութիւններ ընել,

Աւերջանող Գ բանապետական ձնշուքը զագաթնակէտին հասուց. իր տկար զաւակը շարունակեց իր հօրը դրուութիւնը, առանց օժտուած ըլլալու իր հօրը մարմնական կորովալի յատկութիւններովը: Կը կարծուէր թէ Աղատութեան գաղափարը այլ եւս սատակած, ներեալ դիակ մըն է, գերեզմանին մէջ փտտելու դատապարտուած: Բայց դիակը յարութիւն կ'առնէ, ու իր գերեզմանապահները շուարած կը սարսափին: Բեղրպուրկէն վերջին լուրերը կը հաղորդեն թէ կառավարութիւնը ջղային այնպիսի գրգռեալ վիճակի մէջ է որ քան թաքի առաջուան կացութիւնը կը յիշեցնէ: Ու քան թաքի առաջ կը որ Աւերջանող Բ կը սպաննուէր: Կ'երևայ թէ կառավարութիւնը հիմակ կը հաւտայ որ Ոչնչականութիւնը խորարմատներ ձգած է Ռուսիոյ մէջ, ու այժմ աճած ուռճացած, կը ծածկէ Չարին ամբողջ կայսրութիւնը: Եւ այդ ահեղ վտանգին զոյութիւնը ոչ ոք մտքէն կ'անցնէր դեռ թիչ մը առաջ:

Ինչ ըլլայ ըլլայ, ո եւ է գնով ձեռք բերել կ'ուզուի յեղափոխական շարժումին առաջնորդը: Առանէ մը ի վեր է որ Բեղրպուրկ ուրիշ բանի վրայ չիտօսուիր բայց եթէ ձեռքակալութեանց, խուզարկութեանց, թուղթերու գրաւման: Անարակուտելի կը թուի թէ Ոչնչականութեան վարիչներուն մէջ բարձրաստիճան անձնաւորութիւններ կը գտնուին: Վերջին օրերս հարիւրաւոր անձեր ձեռքակալուեցան, ու քաղաքական կարևոր անձնաւորութեանց տուններէն վտանգաւոր թուղթեր ձեռք ինկան:

Արտասահմանի ոտականութիւնը սուսականին հաղորդած է թէ Բեղրպուրկ զաւարտութիւններ կը սարքուին բարձր դիրք ունեցող անձերու կեանքին դէմ: Կը լուսի թէ քովի թէ մը կազմակերպուած է նպատակ ունենալով սահմանադրութեան մը հաստատութիւնը, հետեւաբար զգուշութեան բազմաթիւ միջոցներ ձեռք կ'առնուին: Ոտականութիւնը գտեր է թէ յեղափոխական մեքենայութեանց կեղծները լոնտոն ու Բարիզ կը զրտնուին: Վերջերս Բեղրպուրկ հասած շատ մը սնտուկները կը կարծուէր թէ նարինջէ գատ ուրիշ բան չէին պարունակեր, բայց երբ անոնց ներքևի մասերը ընտուցան, ահա տեսնուեցաւ թէ վեցհարուածեաններ լեցուն են անոնց մէջ: Բիւթիլօֆի երկաթի գործարանին մէջ բանաւորները հազարաւոր դաշոյններ պատրաստած են գաղտնապէս. օտականութիւնը ամէնքն ալ գրաւեց: Վերջերս գործարանի մը այրուելուն պատճառաւ երկու հազար բանուոր պարապը մնացին. կառավարութիւնը այդ անդործներուն կը շարունակէ շաբաթականին վճարել օրպէս զի նեղութեան մղուած չերթան չգորացնեն Ոչնչականութիւնը: Ժանտարմաններուն եւ ոտականութեան այլ եւս գրաւոր հրահանգներ չեն տրուիր, վախնալով որ կ'երթան կը մասնեն: Շաբթուան մէջ մերթ ընդ մերթ

կը կանչուին, եւ ինչ որ անմիջապէս պիտի գործագրեն անոնց համար բերանացի հրահանգներ կը տրուին:

Երոպայի հանրային ուշադրութիւնը գէպի Ռուսիա կը դառնայ: Ֆրանսայի մէջ յանձնախումբ մը կազմուեցաւ նպատակ ունենալով ուսուսանողութեան մասին մտքերը լուսաբանելու: Մեծանուն գրողները, ամէնքն ալ յեղափոխական շարժումին համար ջերմ բարեկամներ, իրենց համակրանքը հրապարակաւ կը յայտնեն: Զօլաի, Անադոլ Յրանօսի, Գլարթիի եւ ուրիշներու նամակները, ուղղուած առ ուսանողութիւն, հետզհետէ կը հրատարակուին: Զօլա կը գրէ. « Ռուսիոյ մէջ ինչ որ կը պատահի այժմ, հանրային խղճմտանքը կը վրդովէ: Չի կայ ազատ մտածող մէկը որ չյարի ուսուսանողութեան, այն ուսանողութեան որ այնքան տաժանօրէն կը գործէ, որ անքան ծարաւի է ճշմարտութեան եւ ազատութեան, և զօր բռնապետական կառավարութիւն մը կուզէ վարել ինչպէս ոչխարներու հօտ մը: Բայց ո՞չ ապաքէն այս բոլոր ահեղ գէպերը, այս հերոսական ըմբոստացումը, այդ վայրագօրէն զօպումը, այդ ամէնը անհրաժեշտ հանգրուաններ են բնաշրջումին: Ու երբ մեր գայրօյթը կը պայթեցնենք ի տես այդ երիտասարդներուն որոնք իբր օտարակներ կը մտրակուին, պէտք չէ՝ ուրախանանք մեծ վերջին կայսրութիւններէն մէկուն մէջ յեղափոխական այս յանկարծակի պայթումին համար: Թուի այն թէ մեհակեման իշխանութիւնը հարուած մը կ'ընդունի, որուն հետեւանքները վճռական պիտի ըլլան: Այս պատճառաւ մինչ իմ եղբայրական համակրանքօ կը յայտնեմ ուսուսանողներուն, իմ ուրախութիւնս ալ կը յայտնեմ տեսնելով որ իրենց արիաբար կը գործեն մարդկային ազատագրութեան կուրսին մէջ: »

Զօլայի ոգիէն կը ներշնչուին ֆրանսացի այն բոլոր գրողները որոնք կը համակրին ուսուսանողութեան ըմբոստացմանը: Ռուսիոյ դաշնակից ազգէ մը բղխած այժմ համակրանքը խորին ազդեցութիւն մը պիտի գործէ աշխարհի վրայ:

Տեսնելով ուսուսական այդ մեծ շարժումը որ աշխարհիս ուշադրութիւնը եւ հոգածութիւնը կը գրաւէ, մըտքերնիս բնականաբար կը դառնայ գէպի Թիւրքիա, գէպի Երիտասարդ Թիւրքերը որոնք հիմակ աւելի քան երբեք սղորմելի ոչնչութիւններ կը թուին, երբ կը բաղդատենք ուսուսանողութիւնը հետ: Ու մինչեւ իսկ կ'ընան այդ Երիտասարդ Թիւրքերը բաղդատութեան մտնել մեզի պէտք պզտիկ ժողովրդի հետ անգամ: Թէև պզտիկ ենք, եւ օակայն մեր մտքի օւժովը, մեր հոգեկան արիւթեամբը քրքան գերիվերոյ ենք մեր վրայ տիրող յուլացեալ, ծոյցեղէն:

Ֆրանսա եւ իրեն հետ համօրէն աշխարհ կը համակրին այսօր ոտո ուսանողական շարժումին, երբ կը տեսնեն թէ մտքի մարդիկ են ուսուսական քննադէմ ծեծօւողները: Թուրքոյէն ու Կորեիէն մինչեւ նորընծայ օւ-

սանողները ամէնքն ալ զաղափարի մարդիկ: Ու այդ մեծ ժողովրդին զրականութիւնը բան մը ըրած է ընդհանուր մարդկային մտքին համար: Ռուսիա Թուրքիան է, Տաօթայէվօքիի, Թուրքոյի հայրենիքն է և Ռուսիա է Թիւրքերուն մէկ հատիկ մարդը: Տամատ Մահուս փաշայի պէտ ոչնչութիւններ են որ մարդ պիտի համարուին:

Ինչ անհուն տարբերութիւն ուսուսական եւ Թրքական շարժումներուն օւ գործունէութեան միջեւ: Ռուս յեղափոխականը Երոպայի մէջ պզտիկ թերթ մը ունի որ լուր կը հնարգէ միայն, տոանց շատ գոռալուս գոչելու: Ու լուսութեան մէջ կը գործեն: Ինչ որ պետք է Երոպայէն ընել զայն կ'ընեն անձայն անշուկ. իսկ երկրին մէջ կը մտնեն եւ կը կազմակերպեն: Ու երբ այլ եւս մեռած, թաղուած, որդնտած գիակի մը պէս կ'արհամարհուէր սուս ազատագրութեան դատը, նահա մեռեալը իր կափարիչը վեր կը նետէ, եւ աւելի քան երբեք ուպատանից կը կանգնի ընդդէմ Չարին, որ մարմնացուցիւ է միահեծան բռնապետութեան:

Ռուս ժողովուրդը հազարներով բիրներով տուաւ իր կամատար ևսահատակները, Թիւրքերուն մէջ տեսնուեցաւ, Ալի Սուլթէն ետքը, ինքնույջօժար անձեռքեր մը: Իրաւ է որ այս վերջին քօան տարիներու մէջ Թիւրքերը շատ կորուստներ տուին, բայց այդ դժբաղդները ամէնքն ալ աւելի զիպուածի զոհեր են քան թէ համոզեալ յօժարակամ անձնուէրներ: Աւելի կամ նուազ հիմնաւորկասկածներ ու աւբաստանութիւններ շատ մը երիտասարդներու բանտարկութիւնը, աքսորումը, մահը պատճառեցին, բայց ո՞ր է յեշտպակն այն հայրենասէրին որ մահը աչքը առած, ձեռքը վեցհարուածեան մը ահարեկամ ըլլալ Թիւրքիոյ վարիչները:

Եւ ոչ իսկ ազգային նախանձը մարդ մը ծնաւ Թիւրքերուն մէջ: Կը տեսնէին իրենց լուծին տակ ընկճուած հայը որ, ձեռքը սուր ու հրացան, թիթեակի գէպի մահ կը սլանար. ու իրենք Թիւրքերը սքանչացած ու մոլեգնած քար կը կտրէին: Չեղաւ մէկը որ գոնէ ի փրկութիւն Թիւրք ցեղի պատուին մրցակցէր Հայուն:

Ռուս ժողովուրդն ալ Թիւրքին պէս ընկճուած է բռնապետական մոլեռանդ միապետութեան մը ճնշումին ներքեւ. բայց ցեղը ուժեղ, կորովի, կարող եղաւ նոյն իսկ իր օտրկացմանը մէջ ցոյց տալ իր յատկութիւնները: Ռուսին հօգին ուժանակ մըն է որ այնքան աւելի զօրեղ ու ահագնագոյ կը պայթի եւ կը ռարսեցնէ իր չիքս կողմը, որքան աւելի մեծիակ է զինքը ճշտող քարը: Թիւրքը քրիստոնէին արիւնօքն սւ քրտինքովը ուստծօպունգ մըն է որ ճնշումի տակ կը լսկի, կը օմբի, կը չորնայ կը լմնայ:

Հիմակ աշխարհս հանդիսատես է երկու տեսարաններու: Ռուսը իր զերութեան ճամբէն գէպի փրկութիւն կը յառաջանայ, Թիւրքը՝ գէպի կորուստ:

ՀԱՅ ԵՆՆԻՉՅՐԻՆՆԵՐԸ

ԵՒ

ԱՆՈՆՑ ՊԱՏԱՍԻԱՆԱՑՈՒՆԵՐԸ

Պարոկաստանի Շահին Հայոց նկատմամբ բարեացակամութիւնը մինչ ամբողջ Հայութիւնը կ'ուրախացնէ, ու թրքահպատակ Հայաստանի հայր Պարոկաստանի իր եղբորը երանի կը կարգայ, ահա կ'օկօխնք յանկարծ կասկածիլ թէ գուցէ Պարոկաստանի հայն է որ Վանի, Մուշի իր եղբայրներուն վիճակը նախանձելի կը համարի, ու երանի կը կարգայ անոնց բարեբաստիկ կենցաղավարութեանը: Կ'ենթադրենք թէ մեր այս տղերը անմեկնելի հանելուկներ պիտի թուին անոնց որ Արմենիան կարգալու պատեհութիւնը չեն ունեցած, և ոչ ալ Մշակը: Իրարու հետ ո եւէ կապ չունեցող այդ թերթերուն տեղեկութիւնները ծանօթացնելով մեր ընթերցողներուն, ու պահով ենք թէ ինչ որ առեղծուած կը թուէր իրենց բողոքէ մը առաջ, ա՛լ իբր շատ պարզ ճշմարտութիւն մը պիտի թափանցէ ամէնուն մտքին մէջ ու խորապէս պիտի յուզէ իրենց ալ հայ սրտերը:

Ահա տագնապի աղաղակը զոր թիւքը եւ պարտիկ սահմանազրկէն Արմենիաի միջոցաւ կը լոցենք հայ աշխարհին: Լեզուական թեթեւ փոփոխութեամբ մը կ'արտատպենք մեծ տագնապի մը այդ բուն արտաստուածութիւնները:

* * *

ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ

«Այո՛, վերջին անգամ, կը գոչէ Ման-Արմէն, ես կը դիմեմ հայ յեղափոխականներուն, յանուն մեր սիրած Հայաստանի փրկութեանը, յանուն մեր պաշտած գաղափարի սրբութեանը, յանուն հայրենիքի ազատութեան զեհուած քաջերու յիշատակին, մեր խեղճուկրակ Սալմաստցիները ազատել հայ Եննիչերիներու ձեռքէն:

«Սալմաստ տեղի ունեցած դէպքերը ա՛յնքան զարհուրելի են, որ գուցէ անոնց առջեւ արդարանան եւ սուլթան Համիտն ալ, Մուսա պէյն ալ, Սաատէտտին փաշան ալ, որովհետեւ ասոնք թիւրքեր են, ասոնք «տին-տիւզմանի» են, եւ վերջապէս ասոնք — այսպէս ըսենք — բարբարոս են: Բայց գուցէ ինչ կ'ըսէք հայ անունով գործող եննիչերիներուն, որոնցմէ ամէն մէկը իր պիղծ դէմքը կը ծածկէ յարգելի նահատակի մը յիշատակովը: միտներ՝ յեղափոխական կազմակերպութիւններու վարադոյրով: Հաւատացէ՛ք, ո՛չ մէկ ազգի, ո՛չ մէկ

լեզուի բառարանի մէջ կրնաց բառ մը գտնել որով կարելի ըլլայ որակել ասոնք:

— «Երկու տարի է որ ես Արմենիաի ընթերցողներուն յայտնի փաստեր կուտամ, տեղի ոգնեցած դէպքեր ու նկարագրութիւնները կ'ընեմ. ես լիայօյս էի որ եննիչերիներու զարգացած զեկավարները, հրապարակաւ տեսնելով իրենց սխրագործութիւնները, գոնէ պիտի ամբողջանային, բայց ո՛չ: (Արմենիաի խմբագրութիւնը այս դիտարկութեան կը զարմանայ. «մենք կը զարմանանք որ, կ'ըսէ: այդպիսի յայտ ունեցեր էք, մօտէն զիրենց ճանչցած լինելով մէկտեղ:») Ուրեմն, կը շարունակէ Ման-Արմէն, ինչ, թողունք որ Սալմաստցիները զերբ մեան, թողունք որ քանզուի մեր ԱՊԱՍՏՈՆԻ միակ վայրը, և ինչ ազնուութեամբ:

«Վերջին անգամ ես կը դիմեմ հաւատարմութեան, եղբայրութեան պաշտպան ներկայացող Հնչակեան եւ Դաշնակցական կազմակերպութիւններուն, եւ վերջապէս բոլոր ճշմարիտ հայերուն, ազատել Սալմաստցիները:

«Սալմաստի բանաբարուած հայ հարօր, հարօտահարուած ընտանիքի յոյս հայրեր, ցանուցիր եղած գաղթածներու կանանց ու զաւակաց արտասուքներ, խափանուած ուսումնամաններ ամէնքն ալ ազատարար ձեռքի մը կը սպասեն:

«Այո՛, վերջին անգամ լոցեցէ նահատակ Սալմաստցիներու աղաչանք պաղատանքին:

* * *

Պիտի չմեղադրէինք թիւրքիոյ Հայոցմէն անոնք որ կարգալով նամանաւանդ այս վերջին տղերը, յայտարարէին թէ զանոնք գրողը պարզապէս կը զառանցէ կուտակցական մոլեգնութեամբ աչքերը մթազնած, թէ ուրիշ բան չէ ըրած բայց եթէ թրքական բարբարոսութիւնները տեղէ մը ընդօրինակելով զանոնք Սալմաստի մէջ դրած է, եւ վայրագ քիւրտերն ալ հայ «յեղափոխականներու» վերածած է, որպէս զի յագուրդ տայ իր կուտակցական կրքերուն:

Եւ օակայն ով որ թերեհաւատութեամբ ուզէ կարգալ Արմենիաի նկարագրութիւնը, բայց և այնպէս Մշակի հաւատաւորներուն վրայ ալ եւս պատասխանելու բառ մը պիտի չգտնէ:

* * *

ՄԻՆՉԵՒ ԵՐԲ

Ահա ցնցողական վերնագիրը որով Մշակի Սալմաստեան թղթակիցը Հայութեան գթութիւնը կը հայցէ Սալմաստցիներուն համար:

«Չարթի՛ր, Բաֆի՛ր կը գոչէ, և տես քո ծննդավայր

գիւղում թո՛ւ հայրենակիցների վրա ինչպիսի բանութիւններ են գործ գնում, ինչպէս են վերաբերվում դէպի թո՛ւ յիշատակը, ինչպէս են շահագործում թո՛ւ հերոսների—կարօսների, Առլանների անունները:»

Թղթակիցը կը գտամէ թէ այդ հայ «հերոսներու» ձեռքէն ի՛նչ վիճակի հասած է Սալմաստ:

«Ի՛նչ ընեն խեղճ գիւղացիները, կ'ըսէ. արիւնս ուշտ գազաններու վայրագութիւններէն օարօսփած՝ կամ պէտք է թողուն գաղթեն, կամ պէտք է երթան շողոքորթեն այդ հրէշները, հաճոյախօսութիւններ ընեն, և բամբասեն ու գրպարանն իրենց գրացիները: Գիւղին պատուաւոր գերդաստաններէն մէկը արդէն թաւրիզ տուն է գնած, օրպէս զի ընտանիքով Սալմաստէն հեռանայ: Ուրիշ մէկ երկու ընտանիք ալ անոր օրինակին պիտի հետևին: Իսկ բազմաթիւ ընտանիքներ կը պատրաստուին Ռուսաստան գաղթելու: Արդէն այս վերջի երկու տարուան մէջ հարիւրէն աւելի ընտանիք Սալմաստէն Ռուսաստան գաղթեցին, միայն եւ միմիայն իրենց հոգիները այդ հրէշներուն ձեռքէն ազատելու համար: Չը լիշենք այն էրիկմարգիկը օրոնց թիւը հարիւրները կ'անցնի, օրոնց դարձեալ միևնոյն պատճառովը չեն կարող իրենց հայրենիքը մանել:»

«Շա՛տ լոնցիւնք, շա՛տ համբերեցիւնք, կ'աղաղակէ Մշակի Թղթակիցը, յուսալով որ շարիքէն համբերութեամբ կ'ազատուինք. բայց ի գուր, ալ ճար չկայ, պէտք է հրապարակի վրայ հանել, որովհետև արիւնաքամ եղած Սալմաստցիին յուսահատութեան տագնապի մէջ կը տառապի, եւ ու եւ է հնար չգտնելով իր գլուխը պահելու համար: Կ'օտիպուի թողուլ իր հայրենիքը, եւ գաղթել օտար երկիրներ:

«Ի՛նչ պէտք է ըլլայ մեր վիճակը, կը պաղատի Սալմաստեան Թղթակիցը. մինչեւ ե՛րբ այսպէս պիտի շարունակուի մեր դրութիւնը. ի՛նչ միջոցով մենք պէտք է ազատուինք այս ազգակործան հրէշներէն:»

«Մինչեւ ե՛րբ:»



Աւելի մանրամասնութեանց մէջ չենք մտներ, եւ այդ ընդհանուր դժերով գաղափար մը կուտանք Սալմաստի մէջ գործող շուտականներու մասին:

Այս կարգի խնդիրներու մէջ հեղինակութեամբ խօսելու իրաւունք ունեցող հրապարակագիր մը, որ Մշակին ալ մշտական աշխատակիցներէն է, փաստաբան Պ. Տիգրան Յովհաննիսեան, զայրայթի աղաղակ մը կ'արձակէ Մշակի մէջ, աղաղակ որ կ'օգտուի ու թիւրքիոյ Հայոց օրտերուն խորը արձագանգ պիտի գտնէ. աւելորդ է յիշել Պարօկասանի տարաբողոք հայերը:

Հիմնուելով Մշակի սաուգապատում տեղեկութեանց վրայ Պ. Տիգրան Յովհաննիսեան կ'ըսէ.

«Ինչպէս կը տեսնէք, խնդրը հետաքրքրական է, մանաւանդ երբ Երասխանի անունը թէ միայն Պարօկաստան չեն որ կը գտնուին այդ հրէշներէն, ու այդ հրէշները մեծ մասամբ ուսուհայեր են, և թէ անոնք շատ աւելի վատնաբար են քան իսկական խաչագողները:

«Իսկական խաչագողները աղուէս—խաչագողներ էին, իսկ ասոնք գայլ—խաչագողներ են: Անոնք խաբերայութեամբ ու մեղմ միջոցներով կը գործէին, ասոնք՝ բռնութեամբ եւ արիւնահեղ միջոցներով: Խաչագողի տիպը ենթարկուած է բնաշրջումի, եւ դէպի գէշը փոխուած է, — յիսուսով ձեւացող խաչագողին տեղը եկնիչերի—խաչագողն է բռնը:

«Եկնիչերի—ահա իսկական բառը որ կրնայ բնութայն այդ հրէշները, օրոնց զանազան վեճ գաղափարներ, վեճ անուններ ու սուրբ զգացումներ կը շահագործեն, օրպէս զի առանց աշխատանքի ապրին գիւղացիի հաշուով, եւ անպատիժ օտնակոխ ընեն անոր ընտանեկան պատիր:»

«Ո՛վ է մեղաւորը որ մեր մէջ այդ զգուշի տիպարը առաջ եկած է: Որ՞ա վրայ կը ծանրանայ այդ երեւոյթի պատասխանատուութիւնը: Իմ խորին համոզմունքով, այդ պատասխանատուութիւնը կը ծանրանայ ամէն անոնց վրայ օրոնց իբր օրոշ գաղափարներու քարոզիչներ ու պաշտպաններ, ժողովրդին ներկայանալով եւ անոր վստահութիւնը գրաւելով, իրենք խաչագողութեամբ չեն պարապիր, բայց կ'ընկերանան խաչագողական հակույթներ ունեցող մարդիկներու հետ, եւ այնքան կարծածախ կը գտնուին, որ կը կարծեն թէ, կարելի է կեղտոտ մարդիկներու ձեռքով լաւ գործ կատարել, ու զանազան մութ յատկութիւններ ծառայեցնել լուսաւոր գաղափարներու համար: (*)»

«Պէտք է անկեղծ ըլլալ եւ խոստովանիլ որ ճիշդութիւնը կաթոլիկ կղերին մենաշնորհը չէ: Ճիշդութիւններ կան ամէն տեղ, եւ աւելի կամ պակաս թուով, բոլոր կուսակցութեանց մէջ, մանաւանդ ծայրայեղ, — դէպի աջ կամ դէպի ձախ, — կուսակցութեանց մէջ: Եւ ահա երբ ճիշդութեանը կը զօրանայ գաղափարի մը ծառայող խումբին մէջ, երբ այդ խումբը կ'օկօի խորութիւն չգնել միջոցներու եւ անձնաւորութիւններու միջեւ, ան ատեն խաչագողութիւնը կը օկօի փթթիլ իբր թունաւոր ծաղիկ մը կեղտոտ ճահիճի երեսը:

«Անդուսնգ բացէք ճիշդութեան եւ գաղափարի միջեւ. համակուեցէք այն սկզբունքով որ գաղափարներուն պէտք է ծառայել միմիայն յանուն բարոյականութեան:»

(*) Մեր մէջ «եա՛ գող, եա՛ գողի ընկեր» կ'ըսեն. խաչագող թէ խաչագողի ընկեր, խորութիւնը աննշմարելի է:

թեան, և բարոյական միջոցներով. գաղափարական տա-
ճարէն խարազանով դուրս քշեցէջ բոլոր անոնք որ ստոր
հակուցեանք և կեղտոտ բնագոյնք սենին, որքան որ ալ ա-
նոնք ձեզի օգտակար երևնային առժամեայ շահու տե-
սակեալն. եւ խաչագողութիւնը, եթէ կարելի է ըսել՝ գա-
ղափարագողութիւնը, կը շքանայ իբր ծանր գիշերական
խուճապանք:

«Կը կրկնեմ, նոր տիպարի խաչագողութեան պա-
տասխանատուութիւնը զլիարատակէ կ'իյնայ, այն անձ-
նաւորութեանց վրայ որոնք յանուն գաղափարի կը խօսին
և իրենց գաղափարականութեամբ կը պարծենան. պար-
տականը անոնք են մեծ եռանդով մաքառելու ընդդէմ այդ
երևոյթին որ ոչ միայն մինչեւ գաղափարականութիւն
հասցնող չարիք մըն է, այլ և ամենամանարգ խայտա-
սակութիւն:

* * *

Այս օրուան համար կը բաւականանանք մեր ընթեր-
ցողներու ուշադրութեանը եւ օրօճումին յանձնարարել
այս տեղեկութիւնները:

Բայց որոն անունովը կը գործեն այդ Եկեղեցիները,
որ զրօշակին նեղքն կ'ծկուտած են. որոնք են անոնք ո-
րոնց կը վստահացնեն թէ «իրանք գործով զբաղված են,
մեծ գործերով»: Կ'ըմբռնենք թէ գրաքննական նկատում-
ներ արգիլած ըլլան Մշակի խմբագրութիւնը աւելի բա-
ցայայտ շեշտել հայ-Եկեղեցիներու կուսակցական տիտ-
ղոսին վրայ: Բայց պէտք եղածէն աւելի պերճախօս է
Թիֆլիսի յառաջընթացական թերթը երբ քանիցս կը կրկնէ
«Մինչեւ երբ» վերնագրով յօգուածով, խօսելով Սալ-
մաստում օտարականների, ԻՍԿԱՊԷՍ ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ
մասին...» վերջը թեր երկու բառերը մենք կ'ստորագծենք:
Բայց Արմէնիայի թղթակցին խորհրդապահութիւնը այդ
Եկեղեցիներու պարզած զրօշակի նկատմամբ, մենք ան-
տեղի կը գտնենք:

Այս խնդրին առթիւ անօգուտ չենք համարիր յիշեցնել
թէ իրաւունք ունէինք այս էջերուն մէջ հաւաստել օր
Մշակ ո եւ է քաղաքական կուսակցութեան թերթ չէ:
Սալմաստի հայ եկեղեցիներու մասին գրուած յօդուած-
ները անգամ մը եւս կը հաստատեն այս պարզ ճշմար-
տութիւնը: Եւ Ռուսահայերու շեշտուած անկողնակա-
լութեան ամենամեծ ապացոյց մըն է:

Ու աւելորդ չէ մեր ժողովրդին յիշեցնել թէ «տուր
զուսահայոցն՝ ուսահայոց, եւ զթրքահայոցն՝ թրքահա-
յոց» օկզբունքին ծառայելով այս էջերուն մէջ, երբեք
միևնոյն ժողովրդին երկու մասերուն միջեւ խաբականու-
թիւն հաստատելու ձգտումը չէինք կրնար ունենալ: Ո՛չ
ապաքէն ուսահայերը, իրենց պարագլուխ սեննալով
Մշակը, մեր թերթիւնները, իրական կամ ենթադրա-
րական, մեր երեսին կուտան միշտ, ու իրենցն ալ ի-
րենց: Ինչօք մենք թրքահայերս զէտք է այնքան ըս-

տրրկանանք օր ամէն մեզք մեր վիզը փաթթենք: Ու
այս զօհողութեան ալ պէտքը զգալի չէ երբ կը տեսնենք
թէ ուսահայերը իրենք զիրար յարապար պատրաստ են իրենց
բաժինը իւրացնել: Այս պարագային մէջ ալ կը յայթաի
մեզի դէմ զինուած շարաքրտութիւնը:

ԹԻՒՐԻՒՆՆԵՐ ՕՏԱՐ ԹՂԹԱՏՈՒՆՆԵՐԸ

Կ. Պոլիս օրուան տագնապալից խնդիրը օտար թղթ-
թատուններուն փակման պահանջումն է գուլթանին
կողմէն:

Արտաքին գործոց նախարարը զեօպաններուն քա-
նիցս հաղորդեց թէ օտար թղթատունները այլեւս պէտք
է շնջուին: Այս արտառոց պահանջումը զուսացնել
պատասխանի մը չարժանացաւ: Սուլթանը իր կամքը
յարգել տալու համար ծայրայեղութեան գիմեց: Մայիս
ճին օտմանեան թղթատարական վարչութիւնը շրջաբե-
րական հեռագրով մը օտար թղթատուններու վարչու-
թեանց ծանոյց թէ ծովէն ու ցամաքէն եկած բոլոր պա-
յուսակները պիտի բացուին ի ներկայութեան մաքսատան
պաշտօնեաներու, եւ նամակները պիտի բաժնուին թիւրք
ցրուիչներու միջոցաւ: Միանգամայն հաղորդուեցաւ որ
եթէ օտար թղթատունները չուզեն այս պահանջումնե-
րուն համակերպիլ, օտմանեան վարչութիւնը պիտի չի
թողարկէ Պօլսէն եւրօպական պայուսակներուն Արեւել-
եան երկաթուղիներու միջոցաւ փոխադրութիւնը:

Եւ իրաւ ալ, մայիս ճին Պոլսէն մեկնելիք պայուսակ-
ները տեղերնին մնացին, օտար թղթատունները մեր-
ժամ ըլլալով թրքական պահանջումներու համակերպու-
թիւն: Իսկ Եւրոպայէն միևնոյն օրը հասած պայուսակ-
ները օտմանեան թղթատարական վարչութիւնը ինքը
գրուեց: Անոնց կնիքները կոտրուեց, եւ նամակները
ցրուեց թիւրք պաշտօնեանեօս ձեռքով: Կարելի չէ նը-
կարագրել թէ ալ ինչքը եղած են: Շատ մը նամակներ
վար զրուեր են, ուրիշներ՝ բացուած յանձնուեր են. իոկ
կորսուածներուն, սխալումներուն ոչ թիւր կարոչ համարը:
Ու բացուած պայուսակներուն մէջ կը գտնուին եղեր Գեր-
մանիօլ Արտաքին գործոց պաշտօնատունէն, Պոլսոյ դե-
պանատան զրկուած նամակներ:

Այդ գրուածը տակնուվրայ ըրած է, քաղաքական
և առևտրական շրջանակներէ գատ, նաև Երիտասարդ
Թիւրքերուն բարեկամները, ու ամէն անոնք որ Եւրօ-
պա գտնուող տարագրեալներու հետ յարաբերութեան
մէջ են:

Գեօպանները անմիջապէս իրար անցան: Ռուսական

Թնդանօթակիր պահակ շոգենարը մինչև Գավաթ ընդ առաջ զրկուեցաւ Օտեոայէն հասնող շոգենաւին, ու պայտակները առնելով յանձնեց ուստակած թղթատունը: Իսկ երկաթուղիով եկած պայտակներուն համար մեծաշուք հանդիսաւորութիւն մը կատարուեցաւ: Ֆրանսական պահակ շոգենաւին ծովային զինուորները ցամաք հանուեցան. զեռպանատանց խափազներու եւ թարգմաններու հետ միասին կայարան գացին, եւ շոգեկողներէն եւրոպական պայտակները առնելով բերին յանձնեցին իւրաքանչիւր թղթատան: Կայարանը ահագին թւում ժողովուրդ խանուած էր: Թէ՛ այդ հանդիսակաւները, թէ՛ օսմանեան թղթատարական պաշտօնեաները ապշած մնացին տեսնելով որ սուլթանին մայրաքաղաքին մէջ քանի մը օտար ազգի զինուորներ փատիշահին կամը կ'արհամարհէին, հրամանները ոտնակոխ կ'ընէին, եւ օտար պետութեանց թիւրքիոյ վրայ տիրապետութեան իրաւունքը գործնականապէս կը հաստատէին:

Եւրոպա զրկուելից պայտակներուն առաջուժը աւրօտրիական զեռպանատունը օտանձնեց: Յատուկ շոգենա մը պայտակները առնելով վաճառ տարաւ, որկից Եւրոպա ուղարկուեցան: Իսկ գալից պայտակներուն համար տարբեր կարգադրութիւն մը եղաւ: Պուլկար կառավարութիւնը վար կը զնէ զանոնք, Պոլսէն, կարգաւ, զեռպանատան մը խափազը ընկերակցութեամբ թղթատան պաշտօնէի մը մինչև սահմանազուխ կ'երթայ եւ զանոնք կ'ստանայ Պուլկար կառավարութեան ձեռքէն: Այս կարգադրութիւնը գործադրուելով, Եւրոպայէն կառախուժը Սիրքէնի հասնելուն զեռպանատանց թարգմանները, խափազները, եւ թղթատուններու տնօրէնները ընդ առաջ երթալով առին աւանդները: Եւ այսպէս ալ պիտի շարունակուի:

Մայիս 5էն մինչև 10 տեղի ունեցած այս դէպքերը խորին սպաւորութիւն մը թողած են Պոլիս ամէն ազգի պատկանող ժողովուրդներուն վրայ: Եւրոպական համաձայնութեան առջև սուլթանին անզօրութիւնը ամենուն աչքին կը զարնէ: Հայ, Եւրոպացի, Յոյն, Թիւրք, ամէն զատի պատկանողներ սրտերնին փոքր ինչ զովացած կը զգան:

Սուլթանը զեռպաններուն ծանուցագիրներ զրկելով յայտարարեց թէ իր որոշման վրայ հաստատ կը մնայ: Թիւրքիոյ մէջ օտար թղթատուններու հաստատութիւնը պարզապէս բարեացակամ թողտուութիւն մըն է երկրին իշխանութեան կողմէն, բայց երբեք զաշնագիրներու վրայ հիմնուած իրաւունք մը չէ: Ծանուցագիրը շատ նախատալից ոճով կը խօսի օտար թղթատուններու պաշտօնէից մասին, որոնք մաքսանոցութեամբ կ'ամբաստանուին, այսինքն թէ՛ վտանգաւոր նամակները իրենց հասցէներուն կը հասցնեն առանց բանալու եւ թիւրք ստիկանութեան յանձնելու:

Էն առաջ Դերմանիոյ զեռպանը այս ծանուցագիրը

արհամարհանքով ետ զրկեց, առանց պատասխան մը տալու: Միտ զեռպաններն ալ այդ միկնոյժ օրինակին հետեցան: Թէեւ Ռուսիոյ պայտակներուն ս ե կ դէպք չպատահեցաւ, ու իտալիա չունի մասնաւոր թղթատուն, բայց այս երկու պետութեանց ներկայացուցիչներն ալ իրենց միտ չորս պաշտօնակիցներուն հետ համաձայն կ'ընթանան, եւ միկնոյն կերպով կը գործեն:

Այժմ զեռպանները իրենց կառավարութիւններէն հրահանգի կը օպասեն, եւ եղած ֆիասին ու նախատինքնին համար փոխարինութիւն պիտի պահանջեն:

Օտար թղթատուններու պայտակները զբաւելու հըրամանը զաւանդներն ալ զրկուեր ու գործադրուեր են:

Սուլթանին այս խելացնոր հրամանները հետեւանք են այն օարսափներուն որոնք օրէ օր աւելի ուժգնօրէն զինքը խօւճապական տագնապներու կը մատնեն: Հաստատապէս միտքը զրած է որ Եւրոպայի մէջ Անիշխանականներու կողմէն դաւադրութիւն մը պատրաստուած է, զինքը օպանելու համար: Այլ եւս ոչ ոք, օտարազգի թէ օսմանեան հպատակ, պիտի չկարենայ Սէլամըքին իբր հանդիսատես հիւրներկայ գտնուիլ: Անձնական գանձուն ոնեակը որ տարիներէ ի վեր հիւրանոց մըն էր ուրբաթ օրերը, հիմնայատակ քանդուեցաւ սուլթանին հըրամանովը: Դեռպանները եւ անոնց ընկերացող անձեր ի հարկին պիտի կրնան մասնաւոր արտօնութեամբ Սէլամըքին գտնուիլ Երլտզի յատուկ մէկ պորմին մէջ:

Սուլթանին սարոափը օրէ օր աւելի կը սաստկանայ այն հեռագիրներէն զոր Բարիզի օսմանեան զեռպանը հետզհետէ Երլաըզ կը զարնէ, իմացնելով թէ Երիտասարդ Թիւրքերը Պոլիս ցոյցեր կը պատրաստեն: Ոստիկանութեան նախարար Շէֆիզ պէյ, կամ թէ՛ Շէֆիզ փաշա, յայտնած է սուլթանին թէ քանի որ օտար թըղթատունները գոյութիւն ունին բնականաբար յեղափոխականներու նամակները ապահովապէս իրենց տեղուանքը կը հասնին, ու ինք անկարող է ամբողջովին ձեռք ձգել յարաբերութեանց թելերը: Շէֆիզի այն պնդումին վրայ է որ օարսափէն խելայեղ սուլթանը այդ յիմարական հըրամանները տուաւ, հրամաններ որոնք անգործադրելի մնալու դատապարտուած կը թուին — եթէ պետութիւնները չի տկարանան: Կրետէի զբաւուժէն յետոյ նիւթական ու բարոյական ահեղագոյն հարուածն է զոր սուլթանին հեղինակութիւնը կը ստանայ, նոյն իսկ իր մայրաքաղաքին մէջ, իր հպատակներուն աչքին առջև:

Վերջին լուրերը կը ծանուցանեն թէ Պոլիս կացութիւնը շատ ծանրացեր է: Բիւթերի գործակալութիւնը կը հեռագրէ թէ՛ հայկական ջարդերէն ի վեր այս անձին անգամն է որ սուլթանը կրկին Եւրոպան կը զրգռէ:

Ինչպէս յայտնի է, մայիս 6 երկուշաբթի օրը Դուռը առաջին ծանուցագիր մը տուած էր զեռպաններուն, որով օրինական հիմ մը չէր ուզեր ճանչնալ օտար թըղ-

Թատուններու հաստատմանը: Այս առաջին ծանուցա-
գիրը անպատասխանի մնաց: Երկրորդ եւ երրորդ ամ-
բաստանագիր ծանուցագիրները արհամարհանքով եւ զր-
կուեցան: Իսկ հիմա զեօպաններուն եւ Դրան միջեւ պաշ-
տօնական յարաբերութիւնները խզուած կրնան համար-
ուիլ: Դեօպանները ժողովք ըրած են, բայց իրենց որո-
շումները զեռ գաղտնի կը մնան:

Առ այժմ Ֆրանսական եւ Աւստրիական շագենանները
մերժեցին օսմանեան պայուսակները առնել, որով է-
Պոլսոյ եւ նահանգներու մեծ մասին հեռ յարաբերու-
թիւնները ընդհատուած են: Ռուսիոյ, Անգլիոյ եւ Իտա-
լիոյ զեօպանները իրենց կառավարութիւններէն այս մա-
սին հրահանգներ կը սպասեն: Իսկ օուլթանն ալ յամա-
նօրէն կը պնդէ իր որոշումին վրայ: Մեծ տագնապ մը
կը գուշակուի: Սուլթանին նահանջումը իր վարկին
ահեղադոյն հարուածը պիտի տայ: Ու անգամ մը որ
այլ եւս տեսնուի թէ սուլթանը միշտ Եւրոպան իր կըռ-
նակը չունի, հաւանական է որ ըմբոստացման մը շար-
ժումը վերսկսի:

Եւրոպայի ամբողջ մասուը այս խնդրով կը զբաղի,
և թիւրք իշխանութիւնը ոչ ոք իրեն նպաստաւոր կը գտնէ,
նոյն իսկ իր բարեկամներուն մէջ:

Նովոյի վրէմիա ծանր յօդուածի մը մէջ Դերմանիոյ
կայրը կ'ամբաստանէ իբրեւ պատճառ այս կացութեան:
Մի առ մի կը թուէ այն բոլոր թրքասիրական ցայցերը
որոնցմով Վիլհելմ կայսրը սուլթանին եւ մահմետա-
կաններուն երես տուաւ. ու հիմա իր կարծածէն տարբեր
արգիւնք ձեռք կը բերէ:

Վերջին տեղեկութիւններէն կը տեսնուի թէ սուլ-
թանը Եւրոպա իր զեօպաններուն միջոցաւ կը ջանայ
բեկանել եւրոպական համաձայնութիւնը, բայց անհա-
ւանական է որ յաջողի: Սուլթանին պահանջումին ընդ-
դիմաւարտող պետութեանց զլուխը Դերմանիան է, որ
թիւրքիոյ մէջ եօթ թղթատուն հաստատած է, եւ գեր-
մանացիները որոնք օրէ օր աւելի մեծ տեղ մը կը զբաւեց-
նեն իր զորքերուն մէջ, շատ զոհ են իրենց թղթատու-
նէն և չեն ուզեր բնաւ ձեռքէ հանել իրենց իրաւունք-
ները:

ՆՈՐ ՉԱՆԴԷՍ ՄԸ

«Ժողովորդիկն Համար» անունը կրող նոր ամսա-
թերթ մը օկսաւ հրատարակուիլ Բարիզ մայիս 1ին: Այդ
հանդէսին առաջին թիւը օտացանք: Իր նպատակը ո-
րոշող տեսութենէ մը զատ կը պարունակէ հետեւեալ

յօդուածները:

«Հայ Յիշդ».— Գ. Փառնակ օտորագրութեամբ պատ-
մական ուսումնասիրութիւն մը որ հմուտ մտքի մը ու-
տաղանդաւոր գրողի մը գրուած կը կրէ:

«Դարավերջին աղթիւ».— Լեւոն Արօհնեան: Վերջա-
ցող դարուն իր յաջորդին թողած ընկերական խնդի-
րներու վրայ տեսութիւն մըն է, որ գրուած է այն խնամ-
եալ ու քիչ մը խրթին բայց գեղեցիկ ոճովը որ երիտա-
սարգ գրողներու նոր զպրօցի մը բնորոշ յատկանիշը
կը թօփ:

«Դիւցազնօրէն».— Հայ երիտասարդութեան սեղանած
բանաստեղծութեանց շարքի մը առաջինն է: Յեղափո-
խական բարձրաթիւ ջնարեբական բանաստեղծութիւն
մը որուն ձայնը հայ օրտերուն խորը պիտի հնչէ: Հե-
ղինակն է Պ. Ասոմ Եարճանեան:

«Նոր Հոգիներ».— Ջարեհ Վարսամեան: Անհատա-
կան կեանքէ հոգեբանական տխուր ուսումնասիրութիւն
մը, գեղեցիկ գրականութեամբ:

«Հայաստանին».— Վահան Տիրանեան: Արձակ բա-
նաստեղծութիւն մը, զգածեալ խորտեսութեամբ, Հայաս-
տանի հասցէին:

«Դէպի ընդվզումը».— Սուրէն Պարթեւեան: Յեղափո-
խական կեանքէ պատկեր մը, ցնցող, տիրեցնող, մխի-
թարող, յուսադրող:

«Հայուն Ախտաբանութիւնը».— Տքթ. Քօլօլեան:
«Հիւանդանոցներու կազմ»ին մէջ 1900ին ընդհա-
նօր անձնասպանութեան վրայ տաղանդաւոր հայ բը-
ժիշկին հրատարակած յօդուածին երկրորդ մասն է, շա-
րունակելի զեռ: Տարիներէ ի վեր է որ Տքթ. Քօլօլեանի
յօդուածները, առողջաբանական ըլլան թէ հայուն ըն-
կերական իմաստասիրութեանը պատկանող, միշտ հա-
ճողով կը կարդացուին: Ամէն հայ այդ յօդուածներէն
թէ համ կ'առնէ, թէ բան մը կը սորվի: Նոյն ճշմարտու-
թիւնը եւ այս շարքին մէջ:

«Ժողովուրդին Համար»ին պարունակութիւնը ծա-
նօթացնելի յետոյ, ըսենք նաև թէ փափագելի էր որ այդ
ամսաթերթին հրատարակիչները նախ եւ առաջ մեզի բա-
ցատրէին թէ ինչ կ'ըմբռնեն «Ժողովուրդ» բառով: Ուր
որ ազնուապետականութիւն մը կայ՝ ժառանգական, զրա-
մատիրական, զինուորական եւ այլն՝ հոն ժողովուրդ
բառը ունի առում մը զոր մենք Արեւելիցիներս չենք կրնար
ճիշտ միկնոյն իմաստով գործածել: Մեզի կը թուի թէ
նոր ամսաթերթին հրատարակիչները բուն իսկ եւրոպա-
կան իմաստով կը գործածեն այդ «Ժողովուրդ» բառը:
Բայց այս պարագային մէջ թերթին տխուրօր ու յօդ-
ուածներուն ոճը իրարու կը հակասեն: Գրեթէ բոլոր
յօդուածները խմբագրուած են զրական այնպիսի ոճով
մը զոր լաւ հասկնալու համար հայ մը պէտք է որ եւ-
րոպական գրականութեան հմտացած ըլլայ, եւ խնամեալ
կրթութեամբ օտրված ըլլայ իր մայրենի լեզուն: Եթէ

ժողովուրդը բոլորով պէտք է հասկնալ արաթաւանջման զրտ- նուող Հայոց այն օտուար բազմակօյարը որ հայրենի երկրին դանազան կողմերէն եկած են, մտաւորական աւելի կամ նուազ թեթեւ պաշարով ժը, այն ատեն պէտք է որ գրագէտը այդ ժողովուրդին մաքին մէջ ո եւ է գա- ղափար մը թափանցել տալու ոճով գրէ: Իրաւ է որ զը- րագէտներու համար զօհօղութիւն ժըն է մինչեւ ժողո- վուրդը խոնարհացումը, բայց ով որ ժողովուրդը իր հետ կուզէ ունենալ, իրեն գաղափարակից ընել զայն, պէտք է որ նախ ինքը սկսի այդ ժողովուրդին հետ ըլլալ: Նոր ամսաթերթը կրնար առանց ո եւ է անպատեհութեան, մանաւանդ աւելի յարմարութեամբ կօչուիլ «Զարգաց- եալներուն համար»:

Այս նկատողութիւնը բնականաբար ուրիշ հարցում մը առաջ կը բերէ: Ի՞նչ նպատակի պիտի ծառայէ այդ նոր հանդէսը որ ինչքան ալ գրական զրոյժ կը կրէ բայց եւ այնպէս քաղաքական նպատակի մը կը ձգտի: Այս հարցումին պատասխանը պիտի ջանանք մեր յաջորդ թուին մէջ տալ, քննելով «ժողովուրդին համար»ի յայտագիրը որ իբր յառաջաբան զրուած է:

ԼՈՒՐԵՐ

ԿԻԼԻԿԻՈՅ ԿՈՒՅՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ. Պատրիար- քարանը Դանէն «Էմիրնամէներ» խնդրած է Կիլիկիոյ Կարողիկոսական ընտրութեան գործողութիւնները կատա- րել տալու համար: Սպասուած հրամանագրերը երբոր հասնին, Խապայեան Սահակ եպիսկոպոս Երոսասաղեմէն պիտի մեկնի Կիլիկիա երբայն եւ պատգամաւորական ժողով գումարելով Կարողիկոսական ընտրութիւնը կա- տարել տալու համար: Օրմանեան պատրիարքին իւնա- մին, եւ միանգամայն Պատրիարքարանին Դրան գոր- ծակատար, Տիգրան Տէր-Ներսէսեան ուխտի պատրուա- կաւ Երոսասաղեմ գացած է, բուն նպատակը ըլլալով ի նպաստ Օրմանեան պատրիարքին կարողիկոսացմանը աշխատիլ: Այցելու ուխտաւորը նախ Մերսին հանդի- պելով ջանացեր է հոն մտքերը պատրաստել ի նպաստ Օրմանեանի, միևնոյն ջանքերը նաև Երոսասաղեմ կը գոր- ծադրուին:

Երէ Օրմանեան Պատրիարքին ծրագիրը յոչողի, բը- նականաբար է. Փոյսոյ Պատրիարքական արտօք բափոք պիտի մնայ: Հասանական չէ որ սուրբանը բողոստե՛ ըստ Մահմանադրութեան նոր ընտրութիւն կատարել, ուստի պէտք է որ նոր պատրիարքը ընտրուի տղգային իրատեւեցներուն ջնջումովը, ու այն կանոնագրութեամբ որ

Պատրիարք արանին մէջ գաղտնապէս պատրաստուած է, եւ որոնք գործողութեանը համար կը սպասուի յարմար առի մը: Պատրիարքական նոր ընտրութեան մը հարկէ այդ առիքը կը ներկայացնէ: Բայց հասանական է նաեւ որ Օրմանեան Պատրիարք պատրիարքութեան եւ կա- րողիկոսութեան երկու պաշտօնները ուզէ իր վրայ միացնել, «աւսմանայ» կերպով: Ու այսպէս մարտայ րանայ Թիարքիոյ Հայոց անջատմանը Ամենայն Հայոց Հայրապետութեան Սրտակն: Անշուշտ Օրմանեան պատ- րիարք եւ իր քաղաքական ժողովը այս վերջին ծրա- գիրը աւելի ընդունելի պիտի գտնեն, ինչպէս եւ սուր- րանն ալ:

ԹԻՖԼԻՍԻ ԴԵՊՒԸ. Անգլիական բերքերը կով- կասէն հետեւեալ տեղեկութիւնները կը հրատարակեն մայիս 5 րոտականով:

«ժողովրդի բազմութիւն մը «Չինոտրակա Բազարի» հրապարակը հաւաքուելով կարմիր դրոշակ պարզեց: Ոստիկանութիւնը, խոզախները հասան եւ քատող ժա- մոս մը մարտնչումէ յետոյ հագին կարելի եղաւ ցրտան ժողովուրդը: Երկու կողմէն ալ բազմաթիւ վիրաւորեալ- ներ կան: Քառասուն եւ մէկ հոգի ձերբակալուեցան: Ասոց մէջ է ուսանող մը որ Խարքոֆի համալսարանին դէպքերուն առթիւ նոյն քաղաքէն հետադառնած էին: Նմանապէս Բեդրպոտրի համալսարանին խոտովութեանցը մասնակցող երեք ուսանողութիւններ ալ կը գտնուէին խո- վայայտ ժողովրդին մէջ:»

ՀԱՍՑԷ ՆԻ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵՍՆԻՔԸ կը հրատարակուի՝ ամէն ամսու 1 ին- եւ 15ին: Բաժնեգիրն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տուր:

ՆՈՐ ԿԵՍՆԻՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգիր ղրկել ա՛:

L. FRANK,
27, CHESTERTON ROAD,

(ENGLAND) LONDON, W²